I-284

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՐԻ ԾԱՂԻԿ

1891

ՅՈՒՆՎԱՐ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Հէք շրջան	3
ՔԱՂԱՔԱԿԱՆ 1890	13
ԱԶԳԱՅԻՆ 1890	18
ԽԱՒԱՐԷ Ի ԼՈՅՍ	23
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ	33
ԻՋՄԻՐԻ ՎԻՃԱԿ	35
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ	41
ՄԵԾ· ԳՐԻԳՈՐ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ	43
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	46
ԼՐԱՔԱՂ, ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ	48

ՀԱՄԻՒՆԻՄ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական, ռւսումնական, արուեստագիտական

Ե. ՏԱՐԻ 1891

Սոյն Հանդէսը կը հրատարակուի Վիէննայի Մխիթարեան Միաբանութենէ ամեն ամսոյ սկիզբը։

Տարեգին 10 ֆր.

Հասցէ Rédaction de la Revue
«HANTESS» Vienne (Autriche)
Mechitharisteng 4

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

Ամսաթերթ

ՀԱՏՈՐ ԽԲ. 1891

Կը հրատարակուի ամեն ամիս. տարեգին 10 ֆր. կանխիկ վճարելի, բաժանորդագրութեան կեդրոնատեղին է Վենետիկ–վանք Մխիթարեաց Ս. ՂԱԶԱՐ։

Հասցէ Redaction de la Revue Pasmavep, VENISE
(Italie) St. LAZARE

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական գրական

Ազնուական ընդ.

Ի ԹԻՖԼԻՍ

8րդ ՏԱՐԻ 1891

Տարեկան գինն 10 ռուբլի.

ՅԵւրոպա, Թուրքիա և այլուր հեռաւոր երկիրներու համար 30 ֆրանք.

Հասցէ Tiflis. Caucase
Rédaction de «NOR–DAR»

Խմբագիր–հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԱՐԻԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

21ՐԴ ՏԱՐԻ

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒՐԵԱՆ

1891

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻԱ· ՏԱՐԻ 1891 ՅՈՒՆՎԱՐ

21ՐԴ ՇՐՋԱՆ

At no time broke my faith . . .
and delight no lœs in truth than
ni life.

SHAKSPEARE (Macbeth)

Երբ Շէքսպիր Մաքդուֆին ողբերգին մէջ Մալքոլմի բերանը կ'դնէր այս խօսքը — «երբեք չեմ դրժած իմ հաւատս . . . ոչ նուազ կ'սիրեմ ճշմարտութիւնը քան կեանքը — »համոզուած էր անշուշտ որ ճշմարտութեան ամեն սիրահար կարող էր նաև զայն համարձակ քարոզել: Բայց եթէ այդ մեծահանճար բանաստեղծն այնպիսի մի-ջավայրի մը մէջ գտնուէր ուր ամենապարզ ճշմարտութեանց հռչակումն անգամ մեզք համարուէր, այն ժամանակ թերևս իր բացատրութիւնն այլափոխէր և ըսէր — ճշմարտութեան անպժան հատարակութեան մ'արժանի պատիժը ստութիւնն է: —

Վաղուց անտի՝ ստութեան քարոզներ ամեն տեղ գտնուած են ու կ'գտնուին, վասն զի ամեն տեղ ժողո-

վրդեան միամտութեան և դիւրահաւանութեան մէջ շահ ու քաղաք փնտռող արարածներ անպակաս են։ Հայ ժողովուրդը բացառութիւն մը չկազմեր այս մասին։ միայն ամեն հրապարակագրի գործը չէ ժողովրդեան մը սըխալութիւնները դադրեցնել, թերեւութիւններն ու քմհաճոյքը գովել, անոր մտաւորական և բարոյական ինքնուրոյն անձնիլ ու ժողովրդականութիւն շահիլ։ Իրաւի՝ այսպիսի ժողովրդեան մը մէջ՝ որ երես առած ինքնահաւան մանկան մը կ'նմանի, որ ամեն գովեստ և դրուատիք իբրեւ դուստ ոսկի կ'ընդունի, բարոյական արիութեան գործ մը կատարած կ'լինի գրող մը, եթէ՝ աչքն առնելով ամեն անիրաւ յարձակում, մինչեւ իսկ զրպարտական քսութիւնները, իր գրիչը գործածէ իբրեւ մարդակ և հարուածէ ամեն զեղծմունք, մոլորութիւն և ձաղկէ հայրենասիրի, լաւ քաղաքացիի, լուսամիտ հերոսի դիմահներով ներկայացող կեղծաւորները, կեղծաւորներ՝ որ ըստ տեղւոյ և պարագայի կ'փոխեն գոյն ու դրօշակ, կ'փոխեն չափ ու սկզբունք և կ'պահանջեն որ այդ անպատակ ուղղութեան հետեւին ամենքն՝ սպառնալով վատաբար քարկոծել այնպիսիները որ անձնական պատիւն ու ճշմարտութիւնն դեր ի վեր կ'դասեն քան անձնական շահը։ Եւ միթէ կան այսպիսի գրողներ մեր մէջ։ Ի՛հ, շատ հազուադիւտ են, և եթէ չանդգնին, չանուն ճշմարտութեան, ձայն բառնալ և ցոյց տալ թէ ուր կ'կայանայ Ազգին նուիրական շահ, եթէ համարձակին, պատմութիւն ի ձեռին, ծրագրել այն պայմաններն որոց համեմատ կարելի է բարեհովել Ազգին համար յաջողական զարգացում, Օսմանեան գետութեան վերկարար հովանւոյն ներքեւ, անմիջապէս վերջն ու վարջն սուտ ազգասիրութիւնը զրպարտութեան սեւ թոյնը կ'թափէ անոնց գլխուն վրայ, դատաճանութիւնն ու բազդախնդրութիւնն իրենց ճանկերը կ'սրեն, որ ինքնահնար սուտ թիւններով հալածեն, բղխեն հաւեստ ճշմարտաբանները, և եթէ այդ միջոցներն անբաւական համարուին, իբր ազգային պաշտօնական յայտարարութիւններ կ'հրատարակեն անուանարկելու, սեւելու

ինչ որ արևուն պէս փայլուն ճշմարտութիւն է, ինչ որ անցեալ ու ներկայ իրողութիւններ ու դասն փորձառութիւնը կ'հաստատեն, ինչ որ, վերջապէս, գժոխային ապերախտութեամբ կուրացած աչքեր միայն կարող են ուրանալ։

Եւ այսպէս միամիտները պատրող ճամարտակներ, այսպէս ճշմարտութիւնը պղծոտող զրպարտող արատածներ մեծ գործ մը կատարել կ'կարծեն, մինչդեռ սրատութեան սատար և ազգային յեռագիմութեան զօրավիգ եղած են։

Իրաւի՝ տարօրինակ և անհատատալի կ'թուի այս երևոյթն՝ 19ըդ դարու վերջերն՝ հայոց մէջ, որ, սակայն, կ'պարծին իբրև հետամուտ և նախանձախնդիր լուսաւորութեան և ճշմարտութեան։ Այդպիսի երևոյթ մ'այնքան զարմանալի չպիտի երևէր խաւարին հին դարերու մէջ, երբ կրօնային և քաղաքական հին դրութիւններ անհաշտելի ատելութեամբ կ'ջանային մարել նորածին լուսաւորութեան և գիտութեան նշոյլներն, երբ անխիղճ բռնակալութեան մը հուրն ու սուրն և հատատքննութեան խարոյկներն անխնայ կ'կոտորէին ու կ'այրէին հերձուածողներն, վասն զի այս ահռակ ղոհերը կ'պահանջէին դարաւոր նախապաշարմանց սպառնացող վերահաս վտանգներ, երկնային իրաւանց վարդապետութիւնն և երկրային իշխանութեանց շահը, իսկ այժմ, այս լուսաւոր դարուս մէջ, պարզ յառաջդիմական սկզբունք, մաթեմատիքական ստուգութիւններ, պատմական յայտնի փաստեր անտես առնուլ, հալածելն այնպիսի խժդժութիւն, այնպիսի մոլորութիւն մ'է որու ենթակայ գտնուղ ժողովուրդ մը չկրնար ըսուիլ թէ արդի յառաջդիմութեան ոգին ըմբռնած է։

Եւ ինչ է այս ցաւալի կացութեան պլխաւոր պատճառը, ինչ է ճշմարտութեան դէմ հալածանաց չարժառիթն, եթէ ոչ կոյր, անհեթեթ, ապօրէն կռապկան ոգի մ'որ ոչ միայն կենսական շահեր, այլ և ազգին ապագան պատրաստ կ'երևի ղոհել անձնական վրիժառութեան,

անձնական գծուծ կրից գոհացման և անչահ քաղաքականութեան մը համար։ Այս յոռի ոգին է պատճառ որ ծանրախոհ ու հեռատես մարդիկ, հասարակաց կարծիքը լուսաւորելու պաշտօն ունեցող թերթերն անգամ չեն կարող համաձայնիլ ընդհին որոշ սկզբունքի, աղգային ակնարկ չահուց տեսութեան վրայ, այնպէս որ յաջողին միահամուռ պաշտպանել ինչ որ գերազանցապէս շահէտ և նպաստաւոր է հասարակաց բարւոյն, ինչ որ աղգին անմիջական անհրաժեշտ պիտոյից պահանջումն է։ Այս ոգին է պատճառ որ անձերն ու իրերն իրենց ճշմարիտ գոյներով չեն ներկայիր մեզ, որ զանազան անցից և դիպաց բուն պատճառները տարբեր և անհիմն մեկնութիւններ կ'ստանան, այնպէս որ ստէպ ընդհանրական ճշմարտութիւն մը, ապացոյցներով հաստատուած իրողութիւն մը, հակառակութեան ոգւով այս կամ այն կողման վէճի և դժուարութեան առարկայ կ'դառնայ՝ ժողովրդեան միտքն ու խիղճն ի սպառ մոլորելով։ Ջենք ուզեր հին պատմութիւն և հին ցաւեր քրքրել, խառնել, բայց պարտ է անցողակի ըսել նաև, թէ այդ մեր ակնարկած կոյր ոգին է պատճառ որ աղգային կենաց վերջին տասնամեայ չրջանին մէջ այնքան աղգասիրաց տնօրէնութիւններ եղան, այնքան ստապատիր հրատարակութիւններ երևան եկան՝ ի պաշտպանութիւն ապօրինութեանց և անիրաւ հալածանաց, այնքան անմիջական կարևորութիւն ունեցող աղգային բարւոքումներ և հանրօգուտ ծրագիրներ բարձի թողի մնացին, այնքան խաղաղ առաջնորդական վիճակներ խռովութեանց և եկեղեցական գերագոյն իրաւունքներ օտարին մատնուեցան։

Այսպիսի աղգաւեր ոգւոյ, այսպիսի չիմաստութեանց եթէ մասամբ պատասխանատու մնացած են աղգային դործիչ մարմիններն, ոչ նուազ մասնակից եղած կ'լինին աղգային թերթերն՝ եթէ ճշմարտութիւնը այլակերպած են, եթէ պաշտօնական, հաւաքական և մասնաւոր արարմունքն որ հանրային չահուց հետ յարաբերութիւն ունին, ուղիղ և արդար ոգւով չեն գատած, եթէ լաւն ու

օգտակարը չեն քաջալերած, եթէ վատն ու վնասակարն չեն դատապարտած . . . :

* * *

Բայց քանի հատ ազգային թերթեր այս պաշտօնին կոչուած են, և քանի հատն արժանի են իրենց կոչման: Ահա խնդիրները որոց քննութիւնը կրնայ տալ մեզ հայոց ընթերցասիրութեան չափն և հայ մամլոյ պատասխանատուութեան աստիճանը:

Նախ՝ պարտ է մեզ յայտնել թէ՝ ինչ որ շատ տարիներ առաջ ցաւելով գրած ենք* հայ լրագրութեան անհամանձելի վիճակին վրայ, կարող ենք կրկնել և այսօր աւելի մեծ ցաւակրութեամբ: Եւ այս յառաջդիմութեան յայտարար նշան մը չէ, այլ յետադիմութեան: Օրագրութեան պաշտօնը հետզհետէ ծանրացած կ'երևի, թերթերու թիւը կ'նուազի և ընթերցանութեան ոգին կարծես թէ կ'մարի: Այս երևոյթն յառաջդիմական անձուկները տածող ժողովրդեան մը մէջ յետին ծայր ամոթալի է, եթէ ոչ անբացատրելի: Երկու միլիոն տաճկահայ ժողովուրդ մ'որ միշտ կ'պարծի լինիլ քաղաքակրթիչ տարրներէն մին յԱրևելս, մի քանի օրաթերթ և մի քանի շաբաթաթերթ միայն ունի, և այդ թերթերը հազիւ կարող են դոյել իրենց ծախքը: Մինչ ծնծաղելի չլինիր եթէ բազդատութիւն մը հաստատուի եւրոպական և հայկական մամլոյ մէջ: Ինչ անհուն տարբերութիւն: Մինչդեռ եւրոպական ամենէ փոքր ազգի մը թերթերն օրէ օր կ'բազմանան և տեսակ տեսակ ծանօթութիւններ, լուրեր, լոյս կ'սփռեն ընկերութեան յետնադոյն խաւերուն մէջ, մինչդեռ ամեն գաւառակարգի, ամեն վիճակի ու հասակի յարմար ընտանեկան, քաղաքական, կրթական, գիտական եւ պարբերականներ, թէ տպագրութեան, թէ նիւթի, թէ ճաշակի և թէ պատկերներու կողմէ հրաշալիքներ, ամեն օր լոյս կ'տեսնեն և բիւրաւոր օրինակնե-

* Տես Ա. Մ–ան. 1881 երես 2.

րով կ'ծախուին, մեր մէջ հազիւ մի քանի թերթեր չունէ կ'առնուն կ'տան և սակայն կէս ճամբան կ'ձնան, առ չգոյէ ընթերցողի կամ վճարողի։ Ահա քանիցս Մանչոյ կ'ընկնի ու կ'երնէ, ինչպէս և Հայրենիք, որ վերջին չունէն աւանդած կ'երևի՝ զանազան այլակերպութիւններ կրելէն ետև, ահա Մանկանց Փաղկն, այդ ամենապիտանի պատկերազարդ չարաթաթերթն, որ այնքան տարի ամեն զոհողութեամբ հրատարակուելէն ետև՝ հրաւէր կարգաց՝ իր երկտասդյոյը ներկայելով, րոլոր բաժանորդնեբուն որ գէթ անվճար տարեգլիները վճարեն, և երբ անլսելի մնաց, իր դամբանականը կարդաց. ահա Մանչ՝ որ մերթ կ'դադրի և մերթ կ'երևի. ահա Փաղկն՝ որ թերթերը նոր բոյրով բացած կ'շարունակէ և անտարակոյս բարերաղդ պիտի համարի ինքզինք եթէ ծայրը ծայրին բերէ։ Օրական թերթերու մէջ Շուքնէ և Ազնիւ միայն տոկունութեան և յարատևութեան նշաններ ցոյց կ'տան։ Այս դիրքն, մանաւորապէս վերջինն՝ որու կ'պարտաւորին բաժանորդներու առաւելութեան թէ ոչ ընկերական օժանդակութեան և Հանրագումարներու վերջին ենթադրութիւնն աւելի հաւանական կ'թուի, վասն զի, ինչպէս մեր մի քանի կարևոր ընկերութիւնները պարահանդէսներու շնորհիւ կ'ապրին, նոյնպէս մեր մի քանի մեծ թերթերն Հանրագումարներ գոյացած արդիւնքով կը սնանին։ Ազգն զգալի մասնակցութիւն մը չունի, կարելի է ըսել, անոնց գոյութեան, այլ, ընդհակառակն, Հանրագումարներու, փարիզեան (réclame) պղպջերու, այսինքն այն ամեն հրատարակութեանց որ իրեն բնաւ օգուտ չունին, մուրոզաբար կ'հանդուրժէ, բաւական է որ թերթն այդ միջոցներով իրեն աժան գայ. վասն զի ինչ կ'նշանակէ հազար, մինչև իսկ երկու հազար բաժանորդներու թիւն օրաթերթի մը համար՝ որ երկու երեք միլիոն հայոց մէջ կ'հրատարակուի և շահադրգռութեան վտանգէ ազատ է. ինչ կ'նշանակեն այն գանգատներն և երբեմն ծանր բառերն ղոր հայոց մեծագոյն թերթին կոչմէ ամեն տարի կ'լսուին, եթէ ոչ նիւթական վիճակի անձկութիւն, որ

յառաջ կ'գայ անշուշտ բաժանորդներու անբաւականութենէ և կանոնաւոր վճարումներու պակասութենէ։

Մեր օրագրութեան այս հաստատուն և տխուր պատկերը ցոյց կ'տայ որ թրքաբնակ հայոց մէջ կայ ամենասառուար մաս մ'որ օրագրի երես տեսած չունի, թէ մանաւանդ գաւառներու մէջ լրագրի ընթերցումն շատ աւելորդ պերճանք մը կ'համարուի և թէ ընդհանրապէս հայերն՝ որոց մէջ ընթերցասիրութիւնն շատ յառաջ գացած է կ'ըսուի, դրեթէ թերակիրթ ժողովուրդներուն պէս անգէտ և անհետաքրքիր կ'մնան ոչ միայն իրենց ներքին գործերու և խնդիրներու ընթացքին, այլև աշխարհս յուզող այն ընկերական և գիտական նշանաւոր հարցերուն, որոց ծանօթութիւնն անհրաժեշտ է քաղաքակրթութեան մէջ անուն մ'ունենալու յաւակնող ժողովրդեան մը համար։ Եւ սակայն մամուլն այժմ իշխանութիւն մ'է որ երբ լաւ ուղղութեամբ կ'շարժի աւելի մեծ ներգործութիւն ունի քան քարոզիչն ու տրիբունն։ Եւ միթէ ժամանակակից պատմութեան տգիտութեան հետևանք չէ՞ որ հայ ժողովուրդն ստէպ նենգաւոր, բաղդախնդիր մարդոցներու ծուղակը կ'ղլորի, միթէ այդ տգիտութենէ չեն ծագիր ողբալի չարժումներ և չփոթութիւններ ոչով ստէպ անհամար ճլնասներ կ'հասնին ազգային արժանապատուութեան և իրաւանց։

Եւ թո՛ղ չառարկուի թէ հայ հասարակութիւնն աղքատ է, թէ օրագիրները սուղ են, թէ օրագիր հրատարակելու պաշտօնական դժուարութիւնները քաջածանօթ են։ Այս ամէն առարկութիւններն, ըստ մեզ, բարուրանք են, քանի որ ձրի օրագիր կարդալու եպերելի սովորութիւն մը կ'տիրէ շատ տեղ այլ ոչ վճարելու պարտաւորը ընթացք մը, քանի որ ստէպ անօգուտ և ճնասակար հաճոյից գոհացման համար առատօրէն դրամ վատնող աղգայինները կարող են, եթէ միայն հայ մամլոյ և իրենց զարգացման կարևորութիւնն դգացած լինին, փոքրիկ դումար մը խնայել, մտաւին սննդեան համար, քանի որ բաժանորդներու չատութեան համեմատութեամբ բաժա-

նորադարձը կրնայ նուազիլ, քանի որ, վերջապէս, արդէն հրատարակութեան պաշտօնական արտօնագիր ունեցող թերթերն անգամ, ինչպէս տեսանք, կ'դադրին ընթերցողներու սովին պատճառաւ. իսկ քանի գրողներ ասպարիզին կ'քաշուին նկատելով որ գրագիտութիւնն ալ, ուրիշ արհեստներու պէս, պարտի վարձատրուիլ, և թէ այն որ լոկ իր գրչոփը ապրելու ստիպուած է չկրնար, յանուն ազգասիրութեան, ձրիապէս գրելով անօթի մեռնիլ: Բայց դարձեալ Ազգը պարտի շնորհապարտ մնալ այն գրիչներուն որ, թէև ոչ խմբագիր և ոչ վարձեալ աշխատակից են, վերհանձնօրէն գրիչ կ'շարժեն և ստէպ ազգային օրագիրներն իրենց օգտակար յօդուածներով կ'զարդարեն՝ ի սէր լուսաւորութեան և ազնիւ փառասիրութենէ չարժեալ: Այսպիսի զոհողութիւն մը քիչ կ'տեսնենք լուսաւորեալ ազգերու մէջ, ուր չէ թէ չոր ու ցամաք շնորհակալութեամբ այլ հնչական ոսկիով կ'դնուին հանրօգուտ գրուածներ: Երկրորդ՝ անթուելի են այն ջնասներն որ կ'ծագին լրագրի նուաղութենէ, նուաղութիւն՝ որ կերպ մը մենաւաճառութիւն կ'դառնայ: կարող ենք երևակայել ժողովուրդ մ'որ բնաւ օրագիր չունի, որ՝ իբրև վայրենի, լոկ իր օրապահիկն հայթայթելու միջոցները կ'խորհի, որ միայն անբանական կեանք մը կ'վարէ, սակայն դժուարին է ըմբռնել ժողովուրդ մը որ լուսաւորութեան մի կեդրոնը գտնուելով հանդերձ, կ'բաւականանայ մէկ կամ երկու օրագրով և այդ թերթերուն գրածն ու հրատարակածն իբրև ոճի և իմաստի պատգամներ ընդունելով՝ ըստ այնմ կ'վարէ առանին և հասարակային գործերը, ըստ այնմ կ'շինէ իր լեզուն, կը կ'ուղղէ իր բարքն ու վարքը: Այդ դրութիւնը պարզապէս մտաւորական ինքնասպանութիւն մ'է, որ կարծես հետզհետէ ունակութիւն կ'դառնայ մեր մէջ: Ըստ մեզ՝ լաւ և ոչ ղուրկ մնալ օրագրէ քան թէ միամայն, միակողմանի կարծեայ թմբուկն խլանալու չափ լսել: կարող ենք պատմական վկայութեամբ հաստատել թէ օրագրական մենաւաճառութիւնը քանի քանի ձախորդութեանց տե-

ղի տուած է ազգային ղանազան կենսական լանդիրներու յուղման ժամանակ, հասարակաց կարծիքն ի սպառ մոլորելով և յոռի քաղաքականութեան մ'արձագանքը լինելով։ Ոչ այնքան ամօրեայ ու չարաթեական, որքան օրական թերթերն են որ ուղղակի ազդեցութիւն ունին ընթերցող ժողովրդեան վրայ, հետևապէս և մեծագոյն պատասխանատուութիւն։ Այդ ազդեցութեան չարաչար գործածութեան արգասիքը կարելի է տեսնել ազգային ղանազան հիմնարկութեանց, դպրոցական, վանական, առաջնորդական, կաթողիկոսական արդի տարտամ ու ցաւալի կացութեանց մէջ։

Արդէն վեց ևօթ տանի առաջ՝ Մասիս լրագրի դադարումէն ետք՝ ընդհնշմարած էինք որ ազգային անտարբերութիւնն օրագրական ձեռնարկներու մասին անախորժ հետևութիւններ պիտի ունենայ։ Ղանազան լրագիրներու, Մասիսի, Փառնէի և այլոց, Աբեղեանի մէջ ձուլումն, նորակազմ ընկերութեան մը նախաձեռնութեամբ և յատուկ նպատակաւ, այնպիսի գործողութիւն մ'էր որ ներգևում (atrophie) յառաջ պիտի բերէր։ Այս մեր գուշակութիւնը դրեթէ իրականացած կ'տեսնենք և այսօր Թուրքիոյ մէջ մի օրական թերթ կայ, թերթ մ'որ, եթէ առաջնակարգ դրիչներէ անգամ խմբագրուած լինի, չէ կարող համապատասխանել մտային զարգացման պահանջումներուն որ կարծեաց մրցման և զանազանութեան մէջ կ'կայանան։ Բայ աստի՝ լինչպէս ամեն արհեստի և ճարտարութեան, նոյնպէս դրական և լրագրական ասպարիզին մէջ մրցումն է էական պայման բարւոքման և յառաջացման։ Եւ սակայն մեծ թերթը մրցակից չուզեր, անձնական շահու սըխալ ըմբռնմամբ։ Երբ Ա. Մոմսէն Կ. Պոլիս փոխադրուելով օրականի վերածելու խորհուրդն ընկերութեան մը միջոցաւ ի գործ դնելու ձեռնարկներ կ'լինէին, այդ մեծ թերթին ցնօրէնութիւնը բաւական մտայոյզ ժամեր անցուց և իր արբանեակն՝ Մասիս, քանիցս ծաղրեց և նշաւակեց այդ նոր խորհուրդն ու նորակազմ ընկերութիւնն, սոյն թերթին և խմբագրին մահմեդ վիճակին վրայ դամ-

բանական մը կարդալու ևս բարեսրտութիւնն ունենալով։ Ա. Մամուռեան դեռ կենդանի է, տակաւին իր վերջին ժամին հնչած չերեփը, սակայն ինք անչափս գոհ պիտի լինէր եթէ աղդային ոչ միայն օրական, այլ և շաբաթական և ամսօրեայ ցանցառ թերթերու մեծ՝ դաղարածներն՝ Հայբենիք, Մասիս, Երէքշաբթի, Գրական և Լուսաւորչական Շաբաթօրեայ, խնկոյ, Ծաղիկ, Բազմաւէպ, Տնդէս, վերականգնելին և գրականութեան, արհեստից և գիտութեանց զանազան ճիւղերու վրայ հայ ժողովրդեան այլազան բարոյական և մտային պիտոյից համապատասխան նորանոր թերթեր լոյս տեսնէին։ Վասն զի այդ փափաքելի վերակենդանութեան մէջ ոչ միայն ներկայ և ապադայ օրագրութեան չահն կ'տեսնենք, ոչ միայն ժողովրդեան օգուտն և Օսմանեան Պետութեան համար մեծ առաւելութիւնները, որ բանաւոր և օրինաւոր մրցման արդիւնքն պիտի լինին, այլև պարկեշտ, բանիբուն, հմուտ և հաւատարիմ նոր գրիչներու ծնունդն ու մշակումն, և օտարոտի, ճշտասակար նախապաշարումներու վտարումը։ Բայց այս նպատակին համար փափաք ու խորհուրդ բաւական չեն, բաւական չէ օրագրական ձեռնարկներու դիմել, պէտք է որ նաև հայ ժողովուրդն նիւթապէս ալակից գտնուի, համոզուելով վերջապէս թէ՝ ներկայ ժամանակիս մէջ օրագիր կարդալն անհրաժեշտ հարկ մ'է, չահ մ'է, հաճոյք մ'է, թէ կարօտ է աժան գնով ձեռք ձգել այլ և այլ թերթեր և թէ այդ աժնութիւնն անտարակոյս կ'ապահովուի եթէ օրագիրները բաւական բաժանորդներ ունենան։

* * *

Ա. Մամուռն, իր քսանմիամեայ չրջանը մանելով, պարտ կ'համարի յայտարարել որ՝ իբրև ամսօրեայ աղդային և քաղաքական թերթ, եթէ չէ կրցած ուրիշ թերթերու նման ուղղակի ներգործել ընդհանրապէս հասարակայ կածեաց վրայ, եթէ չէ կրցած՝ իր փափաքանաց հակառակ, աւելի ևս ընդլայնել իր ծաւալն, գէթ պահած է

և պիտի պահէ իր յայտնի դիրքն և ուղղութիւնն անվըթար՝ մէկ կողմէ զանազան դժուարութեանց, միւս կողմէ թշնամական խլրտումներու առջև, կատարելով իր խըմբագրական կարևոր պարտաւորութիւններն առ Ազգն և առ Օսմանեան մեծազօր Պետութիւնն, ի շնորհս այն աղնուախոհ բաժանորդներուն որ կ'շարունակեն այսքան տարիներէ ի վեր իրենց աջակցութեամբ դիւրացնել մեր ծանր պաշտօնը, և որոց կ'փութանք ուղղել մեր ջերմագին շնորհակալիքը։ Ոչ նուազ շնորհակալութեան արժանի են Ա. Մ֊ըս աղնուամիտ գործակիցներն և աշխատակիցներն որ երբեմն իրենց ընտիր գրուածներով կը թեթևցնեն մեր աշխատութիւնն և թերթիս փայլ կ'բերեն։

ՓԱՂԱՓԱԿԱՆ

1890

ԵՒՐՈՊԱ, թէև միշտ սպառազէն, խաղաղ տարի մ'անցուց։ Միջազգային առ կախ խնդիրներ՝ որ պատերազմի երկիւղ կ'ազդէին, մնացին անլոյծ, մինչդեռ սպառազինութիւնները չարունակուելով ժողովրդոց դրամական վիճակին վրայ կ'ծանրանան, և ուր ուրեմն ընդհանուր գինաթափութեան ձայներ արձագանք կ'գտնեն միայն մարդասէրներու սրտին մէջ։ Ոչ այնքան քաղաքական, որքան ընկերային, գաղթային և առևտրական պայքարներ նախորդ տարուան էական դէպքերն եղան։

Անգլիա բաւական ծանր փոթորիկներու թատրը կ'ընծայէ։ Ընդհանուր ուշադրութիւն կ'գրաւեն իրլանտական ու գործադրական շարժումնքն, դրամական տագնապներ, գաղթային վէճեր և բարեգործական ձեռնարկներ։ Լորտ Սալզպըրի ի սկզբան զօրաւոր՝ իբրև ճարպիկ և խոհական պետ կառավարութեան, միութենական հատուածին աջակցութեամբ, հետզհետէ կ'սկսի

տկարանալ, Պ. Կլատստոնի ազդեցիկ դիմակալութեամբ, իր Միտլոթեան ճառախօսութեամբ և ազդեցութեամբ Պ. Բառնէլի՝ որու յաղթանակն երբեմն Դայմի դէմ բացած դատին մէջ հասարակաց կարծեաց վրայ նպաստաւոր ազդեցութիւն մը կ'ունենայ։ Սակայն անյուսալի դարձուածներ կ'զօրացնեն կառավարութեան դիրքն, այնպէս որ, Բարլմէնդի վերջին բացման առթիւ ոչ միայն կ'հաստատուի Իրլանտայի հողային դնման օրինագիծն, որ այնքան ընդդիմութեանց բախած էր, այլ և Բարլմէնդն լուծել տալով ժողովրդեան կոչում ընելու և Իրլանտական դատին նպաստաւոր երեսփոխանութիւն մը կազմելու առիկալութիւններն ի դերև կ'ելլենն։ Այս ձախողութեան պատճառ կ'լինի նոյն իսկ Պ. Բառնէլ՝ իր ապօրինի յարաբերութեամբը Օշի կնոջ հետ, և անտի ծագած անախորժ հետևանօք։ Այս հետևանքն են ամուսնալուծութեան դատարանի վճիռն ընդդէմ Օշի կնոջ Պ. Բառնէլի, իր խոստման հակառակ, անտարբերութիւնն ինքնինք արդարացնելու մասին, և մանաւանդ իր երկդիմի, կղզծ և ամօթալի ընթացքն թէ Հնութեան դործին և թէ իրլանտացի անդամակիցներու հետ ունեցած յարաբերութեաց նկատմամբ։ Ասոր յառաջ կ'գայ բառնէլեան կուսակցութեան պառակտում, ազատական կուսակցութեան մէջ պաղութիւն ինքնօրինութեան դատի մասին և Պ. Կլատստոնի գրաւոր յայտարարութիւնն առ Պ. Մօրէլ թէ՝ այդ դատն կրնայ ի կորուստ մատնուիլ եթէ Պ. Բառնէլ մնայ պետ իրլանտական կուսակցութեան և թէ ինք կամ նա պարտի քաշուիլ ասպարիսկն։ Նշանաւոր ծերունի քաղաքագիտին այս վճիռն, որ Բառնէլի բարոյական մահավճիռն էր, մէկ կողմէ իրլանտացի երեսփոխանաց մէջ աւելի բուռն գժտութիւն ու հերձուած կը բերէ, միւս կողմէ կառավարական կուսակցութեան ուրախութեան և ծաղու առիթ կ'լինի։ Պ. Բառնէլ կ'պնդէ մնալ միշտ պարագլուխ իրլանտական դատին, հակառակ իր կուսակիցներու որոշման՝ որով Պ. Մազարիի պետ կ'ընտրուի, Պ. Կլատստոնի դէմ կ'յարձակի յատուկ յայտարարութեամբ մը, Իրլանտայի ազգային կուսակցութեան կոչում կ'ընէ, եռանդագին ընդունելութիւն մը կ'գտնէ ի Տըպլին և ի Գորք և հրաշունչ ճառերով կ'զրգռէ ժողովուրդն իր դրօշակին ներքև մնալ՝ խոստանալով ճզմել իր թշնամիներն։ Նոյն պահուն հիւսային Քիլքէննիի երեսփոխանական ամրոցը թափուր էր, և նոր ընտրութեան առթիւ երկու կուսակցութիւններ ճակատ առ ճակատ

կ՚մաքառին, բայց յաղթանակն կ՚տանին հակառառնելեանք՝ նեցուկ ունենալով կղերական դասն և Պ. Տէվիդ՝ երբեմն Պ. Բառնէլի մտերիմ խորհրդակիցն, և Սըր Բօբ Հէնի երեսփոխան կ՚ընտրուի։ Պ. Բառնէլ այդ ընտրութիւնն ապօրինի կ՚հռչակէ և Ֆրանսա կ՚ուղևորի որպէս դի տեսակցի և բանակցի Պ. Օպրիէնի և Տիլլօնի հետ որ Ամերիկա խոյս տուած էին արդէն Դիրէկտորիի մէջ իրենց յեղափոխական ընթացքին համար բանադարգելութեան դատապարտուած լինելով և որ հակառակ էին Պ. Բառնէլի։ Անգլիոյ առևտրական գործերն նոյեմբեր ամսուն մէջ ծանր տագնապ մը կ՚կրեն՝ հանրածանօթ Պէրին եղբարց հաստատուն տունն յանկարծ սնանկութեան դուռն հասնելով, և առևտրական աշխարհն մեծ աղէտից արհաւիրքէն կ՚ազատի ի շնորհս Անգլիոյ և այլ դրամատուներու օժանդակութեան։ Զանազան գաւառներու մէջ գործադուլներ կ՚պատահին, օրուղչէքը բարձրացնել և աշխատութեան օրական ժամերն ութի վերածել տալու համար բուռն բողոքներ կ՚լսուին և Լիվերբուլի առևտրական Միութեան համաժողովն ի նպաստ ութ ժամեայ աշխատութեան որոշում կ՚ընէ։ Նշանաւոր է մանաւանդ Սկովտիոյ երկաթուղւոյ բանւորներու գործադուլն որով աշխատանքի ժամերու նուազումն կ՚պահանջեն։ Իսկ Պ. Գլատսթոն, փչխուելեան քանակէ զօրապետին մի դիրքն, Խաւարչաշտ Անգլիա և անոր պատրաստելոց ճամբան, որով զանազան աշխատակցական, ագարակային, գաղթային միջոցներ կ՚առաջարկէ Անգլիոյ ամենէ աղքատ և ամենէ ընկճեալ դասերու թշուառութիւնը թեթևցնելու և սկզբնաւորութիւն մ՚ընելու համար 100 հազար անգլիական ոսկի կ՚պահանջէ մարդասէրներու դիմելով, ընդհանուր համակրութեամբ կ՚ընդունուի և մեծագումար նպաստներ կ՚հաւաքուին։ Ոչ նուազ զօրաւոր մղում մը կ՚տրուի դաստիարակութեան գործին և Հելլենական լեզուն Օքսֆըրտի և Քեմպրիճի համալսարաններուն մէջ պարտաւորիչ չընելու խնդիրը կ՚յուզուի՝ յաջողութեան հաւանականութեամբ։ Ամերիկեան դիւցազնը՝ Պ. Սգանլի՝ առաջ փառաջ կ՚վերադառնայ Անգլիա՝ ուր կ՚հրատարակէ իր երկհատոր մեծ գործն իր արշաւանին վրայ և ամենայն պատիւ կ՚ընդունի, սակայն Պ. Պարդլօղի և իր սպայից արարմանց մասին անգլիական օրագիրներու մէջ հրատարակուած խիզճական իրողութիւններ բաւական արատ կ՚բերեն նշանաւոր երկրաքաղին կարդադրութեանց յետասպահ գնդին նկատմամբ։ Գաղթային դժուարութիւններ բաւական ծանր

բանակցութեանց պատճառ կ'լինին Անգլիոյ և Բորթուգալի միջ որու մի հրամանատարին՝ Սէրրա Բինդօի յանդուգն արշաւանին հետևանօք դէպ ի Մաքօլօլօի երկիրն, սահմանագծերն որոշելու փորձերն ու դաշնագիրին անընդունելի կ'ձևան Բորթուգալի կառավարութեան կողմէ, թէև յաջող եզք կ'ունենան Գերմանիոյ և Անգլիոյ միջ՝ Ափրիկեան երկիրներու մասին կնքուած պայմանագրերն՝ որու զօրութեամբ Անգլիացիք Զանկիպարի պաշտպանութիւնն ևս կ'ստանձնեն՝ Հէլիկօլանան տալով Գերմանացւոց։ Նաև Ֆրանսա անմաս չմնար Ափրիկեան երկիրներու բաժանման, մինչդեռ Իտալիա ընդունայն կ'փորձէ ստանալ Ֆասալան։ Անգլիոյ մի քանի գաղթային խնդիրներ դեռ ևս անլոյծ կ'մնան, ինչպէս Նոր Երկրի ձկնորսներու խնդիրը Ֆրանսայի հետ, որ իր հին իրաւանց վրայ կ'պնդէ, և Գանատայի վէճըն Միացեալ Նահանգաց հետ։ Հնդկաստանի ժողովուրդն բարենորոգումներու պէտքն զգալով՝ զանազան ընկերային խնդիրներ կ'յուզէ, մասնաւորապէս մանկային ամուսնութեան սովորութիւնը կ'ուզէ ջնջել։ ՖՐԱՆՍԱ հանդարտ էր նախորդ տարին։ Հանրապետութիւնն հետզհետէ արմատ կ'բռնէ, թատերական և այլ կուսակցութիւններ կ'տկարանան։ Պուլանժէ, ի չնորհս եղած չափազանցանց, ի սպառ բարոյազրկէ մեռած է և իր դաս մը կուսակիցները զղուանօք իրմէ կ'հեռանան։ Պ. Ֆրէյսինէ իր պաշտօնակիցներուն հետ իմաստութեամբ կ'վարէ կառավարական գործերն և Նախագահն, Պ. Գարնօ, օրէ օր իր ժողովրդականութիւնը կ'աւելցնէ։ ԳԵՐՄԱՆԻԱ՝ իր երիտասարդ կայսեր ընութիւն, ընկերային նորանոր բարեփոխումներու կը ձեռնարկէ։ Պիսմարգ իշխանն որ շատ հզօր, շատ խրոխտ էր և չէր կրնար հանդուրժելի լինիլ ազդեցիկ և փառասէր կայսեր մը, պաշտօնէ կ'ձգուի և անոր կ'յաջորդէ Գաբրիվի զօրապետն։ Ուիլհէլմ կայսրն հետաքրքիր, անհանդարտ, նոր դաղափարներու և ընկերային խնդիրներու հետամուտ, իր ժողովրդեան սիրելի լինելու փափաքող, կ'ջանայ Գերմանիան ոչ միայն զօրաւոր, այլ և աւելի հարուստ, աւելի բարեկիրթ և թերևս աւելի աղատ ընել, հետևապէս դերմանական կրթութեան, ճարտարութեան և վաճառականութեան նոր մղում մը տալու և գործաւորական դասուն վիճակը բարւոքելու համար օրէնսդրական ծրագիրներ կ'պատրաստէ։ Տոքտոր Քոխի դիւտն, թէև կատարելագործուած կարօտ, նոր վայր մը կ'բերէ դերմանական հանճարին։ ԱԻՍՏՐԱ–ՀՈՒՆԳԱՐԻԱ՝ զմասաւորապէս ցեղական վէճերու առա-

բլոզը կ'լինեն։ Գերմանն և Սլաւեանն (չէք) տարրերն իրաւ կ'բա-
խին և Պոհէմիա մէջտ Հունգարիոյ պէս ինքնուրոյն կառավա-
րութեան մը կ'հետամտի։ ՌՈՒՍԻԱ խաղաղասէր քաղաքակա-
նութեան մը կ'հետևի, թէև կառավարութիւնն իր ազդա-
կան ներքին ընթացքը կ'չարունակէ. կրօնական ազատութիւնն
անուանական է։ Օտար տարրեր ուսուցնելու փորձերն, մերթ
բուռն մերթ օրէնսդրական միջոցներով, յարատև։ Ֆինլան-
տիա, որ Ռուսիոյ ամենէ ծաղկած, յառաջադէմ և քիչ չատ ա-
զատ նահանգն է, իր ամեն հնաւանդ իրաւունքները կ'կորուսէ.
հրէից դէմ հալածանքն կ'սկսի և Սիպէրիոյ խորերէն աքսորե-
լոց դէմ գործուած անգթութեանց սոսկալի լուրեր կ'լսուին։
ԻՏԱԼԻԱ գանձային զժուարութեանց կ'ենթարկի ռազմական և
նաւային պատրաստութեանց պատճառաւ. արդ ծանրութեան
ներքև ժողովուրդը կ'ճնշուի, սակայն Գ. Քրիսպիի պաշտօնեու-
թիւնը զանազան ազգնագրներէ անձկաս կ'ազատի և վերջին
ընտրութիւններն աւելի ևս կ'զօրացնեն իր դիրքը։ Գ. Քրիս-
պի զօրաւոր մեծամասնութիւն մը կ'ունենայ նորընծայ ազգա-
յին ժողովին մէջ և Եզբեակ դաշնակցութեան հակառակորդ ժողո-
վրդական դասն կ'սաստկուի համակերպիլ։ ՀՈԼԱՆՏԱՑի թագա-
ւորին մահուամբ Լուքսէմպուրգի դքսութիւնը կ'բաժնուի հո-
լանտական թագէն և մայր թագուհին խնամատարուհի կ'կար-
գուի։ ԳԵԼՃԻՈՑ մէջ ընկերհաշտական չարժումներ անդադար կը
լինին։ Իսկ ԹՈՒՐՔԻԱ, վեհափառ Սուլթանի նախամեծութեամբ,
իր ներքին, առևտրական և կրթական ձեռնարկ-
ներու նոր մէջտ մը կ'տայ։ Փոքր Ասիոյ մէջ երկաթուղեաց գը-
ծերն բազմացնելու ծրագիրներ ի գործ դնելու կ'սկսին, գան-
ձային վիճակը կ'բարւոքի ի շնորհս բարւոք մատակարարու-
թեան և վարժարաններն երկրի զանազան կողմերը կ'աւելնան։

ՍԵՐԲԻԱ և ՊՈՒԼՂԱՐԻԱ դեռ անհաշտ դիրք մը կ'պահեն ի-
րարու առջև՝ մանաւանդ Մակեդոնիոյ ազգարնական խնդիր-
ներու մասին, և ինչպէս եւրոպական օրագիր մ'իրաւամբ կ'դի-
տէ, Պալքանեան Թերակղզւոյն սլաւական ժողովուրդներն աւելի
թշնամական ընթացք մ'ունենալ կ'թուին իրարու դէմ քան ինչ
որ երբեմն ունէին իրենց տէրապետներու նկատմամբ։ Ռուսիոյ
ազդեցութիւնն Պալքանեան ազգերու, մանաւանդ Սերբիոյ վը-
րայ, կ'ծանրանայ, և Նամսալի թագուհին գործի մէ որ իր ա-
մուսնալուծութեան խնդիրը չարունակ դրգռելով՝ կ'գրգռէ նաև
Սերբիոյ ժողովուրդը։ Իսկ Պուլղարիա, ի շնորհս Գ. Ստանլոս-

լօֆի իմաստուն քաղաքականութեան, որով կ'մշակէ նաև Բ. Դըրան հետ բարեկամական յարաբերութիւններ, կ'յաջողի աւելի անկախ վիճակ մը տալ իր երկրին, և Ֆէրտինանտ իշխանին դէմ դաւադրող Բանիցա հաղարապետին խիստ պատիժ կ'տնօրինէ։ Նոյնպէս կ'յաջողի Բ. Դրան հետ ունեցած բանակցութեան արդեամբ՝ Մակեդոնիոյ մէջ պուլղար եպիսկոպոսաց էքսարկութիւնը հաստատել, այնպէս որ ՅՈՒՆԱՍՏԱՆի կառավարութիւնը և Յունաց պատրիարքարանը կ'դժգոհին։ Սակայն այս դժգոհութիւնն անախորժ հետևանք մը չունենար Օսմանեան կառավարութեան չրջահեաց և հաչտարար քաղաքադիտութեան չնորհիւ։ Այնպէս կ'կարծուէր որ Պ. Դրիքուբիի անկումն, որ յառաջ եկաւ անակնկալ կերպով վերջին երեսփոխանական ընտրութեանց առթիւ, նոր չփոթութեանց տեղի պիտի տար Պ. Տէլիեանիի պաշտօնի հասնելովը, սակայն այս նորընտիր վարչապետն իր խաղաղասիրական նոր տրամադրութեամբն դիւանագէտներու երկիւղը փարատեց։ ԱՄԵՐԻԿԱՅի մի քանի տէրութեանց մէջ յեղափոխական, դրամական և տնտեսական չփոթութիւններ կ'ելնեն։ Ի հարաւ՝ Պրազիլիա վերջապէս կ'գտնէ իր անդորրութիւնը հասարակապետական նոր կառավարութեան հաստատութեամբ. իսկ Արժանդինի դաշնակցութեան գինուորական կարդն ապստամբելով նախագահ Պ. Սէլմանի դէմ գանձային ձեղծումներու պատճառաւ, Պուէնոս Այրէս քաղաքային պատերազմ կ'ծագի, իր վարկն մեծ հարուած կ'ընդունի և աստի կ'հետևի Լոնտօնի հրապարակի վրայ դրամական տագնապը։ ՄԻԱՑԵԱԼ–ՆԱՀԱՆԴԱՑ մէջ կուսակցական պայքարն կ'չարունակուի։ Համամերիկեան խորհուրդն՝ որով Պ. Պլէյն, արտաքին գործոց պաշտօնեայն, կ'փափաքէր առևտրական և քաղաքական համաձայնութիւն մը հաստատել ամերիկեան զանազան տարրներու մէջ, ապարդիւն կ'մնայ։ Հասարակապետական կուսակցութեան ղեկան՝ նոյն Պ. Պլէյն, որ Անգլիոյ յայտնի հակառակորդն է, այլ և այլ օրէնսդրական տնօրէնութիւններու ոյժ կ'տայ իբր յօդուտ ժողովրդեան և ի վնաս եւրոպական շահուց։ Գլխաւորն է Պ. Ֆինլիի մաքսային օրէնքն որով, սակայն, ապրանաց գինը կ'աւելնայ և օրողչէքը կ'նուազի, այնպէս որ սոյն կարգադրութեան հեղինակներն իրենց պատիժը կ'կրեն ընդհանուր ընտրութեանց միջոցին՝ հանրավարականաց (démocrate) յաղթութեամբն, թէև այս ժողովրդային քուէն մասամբ բողոք մ'էր պաշտպան դրութեան դէմ, և հաւանական է որ նախագահա-

կան ընտրութեան ժամանակ հասարակապետական կուսակցութիւնն տեղի տայ հանրավարականին։ Տաքօտաի կարմրամորթներու չարժումները բաւական նեղութիւն կ'տան ամերիկեան կառավարութեան և Սիուքսներու պարագլուխն, Նստուկ Ցուլն, գերի կ'բռնուի և կ'սպաննուի։ Այս չարժումներու պատճառն ամերիկեան գործակատարներու խիստ վարմունքն է բնիկ ժողովրդեան դէմ, որ հետզհետէ կ'նուազին։

ԱԶԳԱՅԻՆ

1890

Ազգը բոլորեց տարի մ'ևս և այս միամեայ չրջանին մէջ իր կենաց զանազան երևոյթներն վեր հանելու և դատելու համար կարևոր են մի քանի անհրաժեշտ պայմաններ որոցմէ գլուխ է խմբագիր մը։ Ուստի պատմագրի կամ լաւ ևս է ըսել տարեգրի պաշտօն ստանձնելու ոչ յաւակնութիւնն և ոչ միջոցր ունենալով՝ բաւական կ'համարինք հարևանցի հայեացք մը միայն ձգել անցնող տարւոյն վրայ, որ մի քանի անակնկալ պարագաներու բերմամբ աննման նկարագիր մը ստացած է քան իր նախորդները։ Արդէն իրարու յաջորդող մի չատ հին տարիներու մէջ դժուարին չէ նշմարել համանման նշաններ՝ որ յատուկ են նաև 1890 տարւոյն, նշաններ՝ որ ազգային անգործութեան, անհետաքրքրութեան և անչարժութեան հետևանքն են։

Նախ՝ ազգային վարչական և օրէնսդրական մարմիններն, եկեղեցական և կրթական հեղինակութիւնները կրցան գոնէ այս տարի նշանակել իրենց արձանագրութեանց մէջ որոշումներ, տնօրէնութիւններ և գործողութիւններ որ նպատակ ունենան լինելին բարւոքել Ազգին ընտանեկան, եկեղեցական, բարոյական, մտաւորական և անտեսական վիճակը։ կրնանք արդեօք ցոյց տալ որ ամենանական աւելի բանաւոր օրինաց համաձայնութեամբ դադար առին ընտանեկան վէճերը, դատաստանական անիրաւ վճիռները և քանաքրանաց դիմելու անհեթեթ

միջնադարեան կամկութիւններ, միմիթ կարող են ներկայել մեզ հայրապետական իրաւանց պաշտպանութեան համար ի դուռ դրուած անօրէնութիւններ, ազգային հոգևոր պիտոյից հոգածութեան համար քահանայական պաշտամանն ընդունակ և արժանի եկեղեցական նորագոյն տարրներ· կարող են հատատել որ, ի չնորհս ճշմարտասէր, ուսեալ ու աղգանուէր հոգևորականութեան, ընդհանրապէս հայ ժողովուրդն աւելի հատատուր, բարոյասէր, աղնիւ և արդարասէր դարձած, կրթական լուսոյն ծրագիրներու չնորհիւ մեր ազգային վարժարաններըն արդիւնաւոր ուղղութիւն մը ստացած և Աղգն աւելի լուսամիտ, պարկեշտ և գործունի երիտասարդութեան մը տիրացած է: Միմիթ հնար է ցոյց տալ կանոնաւոր ելմտից վիճակ, ազգային տուրց արդար բաշխում և արդիւնաւորութիւն, տնտեսական լաւ մատակարարութիւն և, ի վերջ, առաջնորդական չխոմութեանց, կուսակցական ծայրայեղութեանց, արդարութեան և ճշմարտութեան դէմ պաշտօնական միակողմանի կարգադրութեանց վախճանը:

Երկրորդ՝ ժողովուրդն ընդհանրապէս կատարած է իր պարտաւորութիւնները: Բարոյապէս և նիւթապէս ազգային իշխանութեանց օժանդակ, իր եկեղեցւոյ օրինաց հաւատարիմ և արդարութեան միշտ պաշտպան գտնուած է: Մինչ իր թիկան չադուց աւելի վերահասու, ինքնօգնութեան սկզբանց աւելի հմուտ լինելով՝ ջանացիր եղած է օգուտ քաղել վաղուց անտի Օսմանեան Պետութեան չնորհած արտօնութիւններէ, հակել Սահմանադրութեան անթերի գործադրութեան, առանձին գործերու լաւ ուղղութեան վրայ և իր նիւթական վիճակն աչխատասիրութեամբ բարւոքել: Միմիթ Ազգին մտաւոր և ըրթական այժերը միանալով հիմնած ունի՞ն, մանաւանդ նշանաւոր կեդրոններու մէջ, յօդուտ հասարակաց բարւոյն, կրթական, օրագրական, դրականական, արուեստագիտական և գիտական և այլն հաստատութիւններ, միմիթ կ'տեսանե՞նք հայ դրամագլխի և հայ ճարտարութեան ու հանճարի միջոցաւ կազմուած չահագիտական ձեռնարկներ, դրամատուներ, խնայութեան արկղեր, ընկերակցական մարմիններ Թուրքիոյ երկրագործութեան, արհեստներու, վաճառականութեան զարգացման սատար և հայ բանուորներու բարեկեցութեան ձեռնտու գտնուելու համար···:

Բայց աւելի ևս չենք ուզեր երկարել հարցումներ որ մեզ կրնան հեռու տանիլ և զոր ամեն տարւոյ վերջը քիչ շատ խոր-

հելու և դիտելու առիթ ունեցող հայ անհատ մը, մանաւանդ խմբագիր մը բնական կ'ընէ իւրովի կամ հրապարակաւ: Արդ՝ եթէ դիտողն ազգային իրաց վիճակին մէջ այս հարցումներուն բացատական պատասխաններ դանէ, շատ անշահ դատաւոր, շատ յոռետես քննադատ պիտի նկատուի, իսկ եթէ ամեն ինչ յաջող, պայծառ և յառաջդէմ նկարագրէ, թերևս աւելի հանելի երևի ազգային ինքնասիրութեան և հպարտութեան, այլ ոչ լուսին հաւատարիմ ճշմարտութեան:

Այս երկու դատողութեանց մէջ խմբագրութեանս բռնելիք ընթացքն յայտնի է. հակիլ ճշմարտութեան կողմն առանց վնասուածքեան և յուսահատութեան աղաղակներ արձակելու, այն յուսով որ Ազգն ունի տակաւին այնպիսի թագուն կենսական ոյժեր որով պիտի կարող լինի վերջապէս իր ըրած կորուստները դարմանել, ամեն օտարոտի վատ ազդեցութեանց դիմադրել և ազգաշահ քաղաքականութեան մը շաւիղը բռնել:

* * *

Իրաւ՝ մխիթարական չեն Ազգային Պատրիարքարանի եղմատական վիճակն, իր բարոյական իշխանութեան թուլացումն, Սահմանադրական օրինաց դէմ արհամարհանքն, ազգային կալուածներու ու եկամուտներու անարդիւնաւորութիւնը, շատ տեղ թշնամական ոգւոյ յառաջ բերած բարոյական ու նիւթական աւերումներ, այլ և այլ վնասական հաստատութեանց և առաջնորդական վիճակներու անտէր, անխնամ և անհոգիւ կացութիւնն, անտարակոյս յոյժ ախտաւոր ու ցաւալի կին յեղակարծ իրողութիւններ որ խօցեցին Ազգին սիրտն և անոր առ Աստուած Գահն Օսմանեան դարաւոր հաւատարմութեան արատ բերելու բնութիւնը պիտի ունենային եթէ չմերժուէին իրենց օտարոտի մեքենայութեանց արդիւնքն. իրաւ՝ շատ ու շատ ցաւալի է որ հայք իրենց վիճակակից ժողովրդոց չափ յառաջադիմական քայլեր չեն առած, սակայն սարսափելի է խոստովանիլ որ դանազան բարենպատակ ընկերութիւններ, ազգային ինքնուրոյն կրթական հաստատութիւններ, բարեգործական ձեռնարկութիւններ, ինչպէս նաև ազգասէր անձնաւորութեանց կողմէ կատարուած դումարներ, և այլ և այլ գառառներու մէջ անհատական և հաւաքական ճգունք յօգուտ ազգային զարգացման, յուսադրական երևոյթներ են: Պարտ է յիշատակել որ ազգա-

յին մարմնոյն կազմալուծութիւնն անտարակոյս ազէտալի հա-
ւժմատութիւններ պիտի առնուր՝ տգիտութեան, երկպառակու-
թեան, պանդխտութեան և զանազան ազգաւեր ազդեցութեան
պատճառաւ, եթէ ներքին հակակշիռ ոյժեր չզիմակալէին։
Այս կենսատու ոյժերուն մէջ առաջին տեղը կ՚բռնէ ազգային
եկեղեցւոյ անկախ դրութիւնն, որ այլուր ճնշման ներքև դրե-
թէ հոգեվար է, կրօնիկ և խղճի ազատութիւնն, որ Օսմանեան
Թագին հին և վառաւորագոյն գոհարներէն մին է, սահմանա-
դրական հիմնարկութիւններ, եկեղեցական և կրթական ինք-
նուրոյն վարչութիւն, տեղ տեղ ընտանեկան յարաբերութեանց
պահպանողական դրութիւնն, զերծ ազգակուլ օրինաց և յոռի
բարուց ներգործութենէ, և ի վերջէ այն ազգային կրօնական
առանձնաշնորհմունքն զոր Օգոստափառ Ինքնակալ Սուլթան
Համիտ Խան՝ իր իմաստուն և վեհանձն քաղաքագիտութեամբը
հաճեցաւ վերահաստատել յատուկ հրովարտակաւ հաւատարա-
պէս Ցունաց և Հայոց պատրիարքական իշխանութեանց վերա-
տին ցոյց տալով իր գթառատ հոգւոյն նոր և պայծառ վոր-
ձերը։

Ուստի վստահութեամբ մտնենք այս նոր տարին և յուսանք
որ Ազգային գործիչ մարմիններն և ժողովուրդը ձեռք ձեռքի
տալով պիտի ջանան ըստ կարի օգուտ քաղել Ազգին վայելած
դիրքէն և արքայաւանդ շնորհներէն և ազգային բարոյական և
մտաւոր զարգացման համար ի գործ դնել ինչ որ ճշմարիտ լու-
սաւորութեան ոգին, անմիջական պիտոյքներ և ազգային ար-
ժանապատուութիւնը կ՚պահանջեն, մանաւանդ ինչ որ վեհա-
փառ Կայսեր հրամանը պարտ կ՚դնէ Հայոց վրայ կատարել յօ-
գուտ հայրենեաց։

ԽԱՒԱՐԷ Ի ԼՈՅՏ

ԳԼՈՒԽ Ը.

ԽԱՒԱՐԷ Ի ԼՈՅՏ

Այս գլուխը դժկամակութեամբ կ'գրեմ։ Եթէ կարենայի առանց զայն գրելու կալել ու լրացնել վէպս, լաւ եւս պիտի համարէի անոր մէջ յիշատակուած դէպքերը լռութեամբ անցնիլ։ Եթէ իմ կրած փորձանքս տաքօրինակ բաներ են, բոլորն ալ կրնան լուսաբանուիլ գրելիքներէս զատ, վասն զի անբաւատարելի են և երբէք չ'պիտի պարզուին իմ վախաքածիս պէս։

Բօլին վերջացուց արձնցաւ։ Ներս աչերը սեւնելով այնպիսի սարսուռ մ'զգացի որ կարծես թէ սառնաշունչ հով մը բոլոր մարմինս ծակծկեց։ Տեսածս ոչ խելագարութեան և ոչ բանականութեան նշան մ'էր։ Իր աչերն անշարժ բացուած էին, ակնապիշ անշարժ կ'նայէին, այլ յայտնի էր որ ոչ ինչ չէին կարող տեսնել և տեսողութեան ջիղերը բնաւ տպաւորութիւն մը չէին ընդունիր ուղեղին վրայ։ Բոլոր իմ խօլական յոյսերս՝ թէ Բօլինի նուազուժէն ետք իր բանականութիւնը պիտի վերադառնայ, վերջ առին։ Ակներև էր որ շատ աւելի արգահատելի վիճակի մը մէջ ընկած էր նէ քան ինչ որ էր առաջ։

Խօսեցայ Բօլինի՝ անունը տալով, բայց նէ իմ խօսքս չհմացաւ։ Այնպէս կ'երեւէր թէ անգիտակ էր իմ ներկայութենէս։ Նէ կ'նայէր յաւիտեան, ակնապիշ և ահռելի մի և նոյն կողմը։

Յանկարծ առք եկաւ, և մինչև չարժիլս որ արգիլեմ՝ ինքզինք սեղեկէն գուրս նետեց։ Եւևէն գացի։ Պատգօրէն վար իջաւ նէ սանդղէն և դիտեցի որ փողոցի դրան կողմը կ'քալէր։ Իր ձեռքը կղզակին վրայ դրեր էր երբ քովէն եկայ և վերատին դինք կոչեցի անունը տալով, աղերսելով, մինչև անգամ հրամայելով որ ետ դառնայ։ Կարծես թէ իմ ձայնս չէր հասնէր ականջին։ Իր այս տագնապալի վիճակին մէջ, վասն զի կ'զգայի որ իրօք այդ վիճակն ունէր, վախցայ բռնի արգիլել զինք, մտածելով որ լաւ եւս էր թոյլ տալ գնալու ուր որ կ'փափաքէր, անշուշտ ընկերակցելով իրեն որպէս զի վտանգէ պահպանեմ։

Շատ մը փեղտրա և լայն վերարկուս առի, որ բանը հեշտացած էին. վերարկուով Բօլինը ծածկեցի, մինչ ինք կ'քալէր. կնգուղն ալ գլուխն վրայ դնելու յորդորեցայ։ Այս գործողութեան դիմադրութիւն չբրաւ, այլ թողուց որ կատարեմ՝ առանց բառ մ'անգամ արտասանելու՝ այնպէս որ իմանամ թէ իմ դիտաւորութիւնս կ'ըմբռնէ։ Ալա սկսաւ հիասկ քալել. ես ալ իր հետ գնալով։

Բօլին արագ այլ միօրինակ քայլով կ'յառաջանար, այնպէս որ կարծես թէ յատուկ կէտ նպատակի մ'ուներ։ Ոչ աջ ու ոչ ահեակ կ'նայէր — ոչ վեր և ոչ վար։ Այս պտոյտի ժամանակ՝ և ոչ միանգամ տեսայ Բօլինի աչերուն չարժումն, չտեսայ իր արտանուանքին սարսիլը։ Թէպէտ թէս նէրա թէսին կ'դպէր, բայց ատյգ եմ որ իմ ներկայութեանս գազափարը կամ ծանօթութիւնը չուներ։

Այլ ևս չ'արդիլեցի նէրա ընթացքը դէպ յառաջ։ Անհնարաւակ չէր իր թափառումը։ Բան մը, չգիտեմ ինչ, կ'ուղէր ու կ'մղէր իր քայլերը դէպ ի որոշեալ կէտ մը։ Բան մ'իր չփոթ ուղեղին մէջ կ'դրդէր գինք կարելի եղածին չափ չուտով հասնիլ վայր մը։ Իր այս չարժումը արգիլելէն յառաջ գալիք վատ հետևանքէն կ'երկնչէի։ Եթէ այս՝ քնաչրջութեան ծայրագոյն դէպ մ'իսկ լինէր, անխոհեմութիւն էր գինք արթնցնելը։ Բանաւոր միջոցն էր հետևիլ Բօլինի մինչև որ տաղնապը գադրի։

Ուղիղ փողոցն ելաւ և առանց վայրկեան մը վարանելու ուղիղ անկիւններէ դարձաւ, լայն արահետը բռնեց և չիտակ քալեց։ Այս արահետն աւելի քան կէս մղոն առաջնորդեց գիս, ապա յանկարծ չքնաղ մ'ընելով ուրիշ փողոց մը գարկաւ, մինչև կ'սը հասաւ և ատեն մ'առջև կայ առաւ։

Լօնտոնի տուներու սովորական ձևով եռայարկ տուն մ'էր այս։ Ինչ տարբերութիւն ունէր իմ բնակած և ուրիշ հարիւրաւոր տուներէ, միայն փողոցին լամպարին լոյսով կարող էի տեսնել որ անխնամ և անշուք ճնապատ բնակարան մը կ'թուէր։ Փոյտ էին պատուհաններուն վրեղները և անոնց միոյն վրայ թուղթ մը կար որ կ'ծանուցանէր թէ այս փոխաքի բնակարանը վարձու էր կահաւորելու։

Շատ կ'հիանայի թէ երևակայութեան ինչ տարօրէն հով մը առեր բերեր էր Բօլինն այն անբնակ տան առջև։ Արդեօք երբեմն իրեն ծանօթ ոնձ մ'այնտեղ կ'բնակէր։ Եթէ այս էր չարժառիթը, թերևս յուսատու նշան մ'էր թէ՝ նորածին յիշատակ

մը դրգռեր էր զինք իր անգիտակ քայլերն ուղղելու դէպ ի վայր մ'որ իր մանկային օրերուն հետ առնչութիւն ունէր։ Մտատանջ և մինչև իսկ սրտայոյզ կ'սպասէի տեսնել թէ Բօլին ինչ ընթացք պիտի բռնէր։

Բօլին չիտակ վեր ելաւ և ճեռքը տան դրան վրայ դրաւ, որպէս թէ կ'յուսար որ դպելովը պիտի բացուէր։ Յետոյ՝ առաջին անգամ տեսայ որ վարանման և չվոխտութեան նշաններ ցոյց կ'տար։

—Աննասիրելիդ իմ Բօլին, ըսի, արի այժմ հետ դառնանք։ Մութ է, և այս գիշեր շատ ուշ է և այդ տունն այցելելն անյարմար։

Բօլին պատասխան չտուաւ։ Նէ կ'կենար այդ դրան առջև՝ միշտ ճեռօքը զայն հրելով։ Իր թևը բռնեցի և ջանացի մեղմիկ հեռացնել զինքն անտի. նէ դէմ դրաւ կրաւորական ուժով մ'որուն անընդունակ կ'կարծէի զինք։ Ի'նչ որ էր իմ խեղճ կնոջս ուղեղին մէջ ծնած մթին նպատակը, այս յայտնի էր ինձ որ այդ նպատակին հասնելու համար պէտք էր այդ դռնէն ներս մտնել։

Սիրայօժար կ'փափաքէի տալ Բօլինի այդ հաճոյքը։ Այսքան ճամբայ ընելէ ետև՝ կ'երկնչէի նահանջել։ Կ'գուշակէի որ կրնար աղէտաբեր լինիլ այս վիճակին մէջ իր փափաքանաց մերժումը։ Բայց մթէ հնար կ'ր այդ տունը մտնելու։

Լուսոյ նշոյլ մը չկար ոչ վերն և ոչ վարը։ Միայն տան նայելով դիւրին էր հասկնալ որ անբնակ էր։ Գործակատարն՝ որուն անունն ծանուցագրին վրայ կ'երևէր, մշտ մը հեռու կ'բնակէր, և եթէ Բօլինը թողլով երթայի փնտռէի այդ մարդն գիշերուան այն ժամուն ապարդիւն պիտի մնար իմ արշաւանս։

Այսպէս չուարած չորս դիս կ'նայէի և կ'մտածէի ճար մը գտնել. — երբ կ'ըսէի իւրովի թէ արդեօք երկանիւ մը բռնեմ և խեղճ կինս հետս տանիմ, կամ թողում որ այսպէս սպասէ հոն մինչև որ հասկնայ թէ անկարելի է տունը մտնել և վերջապէս տաղտկանալով ինքնայօրդոր ելնէ տուն դառնալու — յանկարծ միտքս բան մ'ընկաւ։ Ատենօք իմ բանալիս տարօրինակ դուռ մը բացած էր, շատ հատանական էր որ վերստին բանար։ Գիտէի որ անբնակ տուներ ստէպ անհոգութենէ կամ դիւրութեան համար անկղպակ կ'մնան։ Այս անհեթեթ կարծիք մ'էր, բայց, վերջապէս, վտրռելով վնաս մը չէր կրնար ծագիլ։ Չանեցի ղրկանէս բանալին, որ ուրիշ պարագայի մէջ զործա-

ծուած բանալին նմանն էր։ Առանց յայղուխեան յուսալու՝ ծակին մէջ մղեցի բանալին և երբ զգացի պարզունակին դառնալն և տեսայ դրան բացուիլն բոլոր մարմնովս սոսկումի նման սարսուռ մը զգացի, վասն զի այս ամեն դարձուածները դիտելով չէի կարող ըսել որ պարզապէս ղուդաղխուխեան արդիւնք էին։

Երբ դուռը բաց տեսայ՝ ինչին առանց բառ մ'ըսելու, առանց զարմացման չարժուելմ մ'ընելու, առանց ոյց տալու անգամ թէ այժմ իմ ներկայուխեանս դիտակ էր քան թէ առաջ, խսկոյն ներս մաաւ գլխ եաև թողլով։ Դուռը գոցեցի և ինչին հետևեցայ՝ ինքգինքս բոլորովին խաւարի մէջ գտնելով։ Լսեցի իր թեթև քայլերն դէպ առաջ, լսեցի սանդղէն վեր ելնելը, լսեցի դրան մը բացուիլը, և այն ժամանակ միայն սթափելով սկսայ ճիգ մ'ընել քալելու — կարծես թէ արիւնս սառած ջուր էր գարձած, մարմինս կ'կծկուէր, մազերս կ'քստմնէին գլխիս վրայ, երբ՝ դեռևս խաւարին մէջ, բակէն անցայ և հեչտիւ սանդուղը դտայ։

Եւ ինչո՞ւ չպիտի գտնէի զայն, թէև մութ, թանձր մութ մը կ'տիրէր։ Շատ քաջ գիտէի այդ ճամբան։ Արդէն ուրիշ անգամ մութին գտած էի զայն և քանիցս երազիս մէջ անցած էի այդ ճամբէն։ Ձմարտութիւնը յանկարծահաս յայտնութեան պէս եկաւ ինձ։ Եկաւ ինձ երբ բանալին կ'դառնար նիդին մէջ։ Ճիշտ մի և նոյն տունն էի ուր երեք տարի առաջ մոլորեր էի։ Մի և նոյն սանդղէն կ'ելնէի վեր, և պիտի կանդնէի ճիշտ այն սենեկին մէջ որ երբեմն սոսկալի և անքաւելի ոճրագործութեան մը թատրը եղած էր։ Այժմ բաց աչօք պիտի տեսնէի այն վայրն ուր, երբեմն կոյր ու անօգնական, քիչ մնաց իմ յանդգնութեանս զոհ պիտի լինէի։ Բայց ինչին, ինչ բան բերաւ ինչին այս տեղ։

Այո՛, ենթադրութիւնս անտեղի չէր, այո՛, իրողութիւնը կը հաստատէր կարծիքս։ Սանդուղը նոյնն էր, ճիշտ նոյն տեղն էր և դրան բարաւորը։ Այն ահռելի դիւերուան դէպքերն, մինչև անգամ խաւարը կատարելապէս կ'անդրադառնային։ Պահ մը սկսայ տարակուսիլ թէ արդեօք վերջին երեք տարիները չէին երազ, թէ արդեօք հիմակ կոյր չէի՞, թէ արդեօք կա՞ր էակ մը կնկանս պէս։ Բայց հեռու վանեցի այդ անուրջը։

Ո՞ւր էր ինչին։ Երբ ինքգինքս գտայ, լուսոյ կարևորութիւնն զգացի։ Իմ լուցկիի տուփս զրպանէս հանելով՝ վերջիկ մամ մը

վառեցի և անոր լուսով մտայ այն սենեակն ուր երբեմն մաեր էի՝ վերստին դուրս ելնելու գրեթէ անյոյս։

Իմ առաջին մտածումս, առաջին ակնարկս Բօլինի համար էր։ Անգ կանգուն կ՚կենար նէ սենեկին կեդրոնն՝ իր երկու ձեռ-ները ճակտին վրայ դրած։ Իր դէմքին և աչերուն բացատրու-թիւնը չատ այլայլած չէր. դիւրին էր նշմարել որ տակաւին ոչ ինչ չեր իմանար։ Բայց կ՚զգայի որ ներա մտքին մէջ պայքար մը կար և կ՚վախնայի այն վայրկենէն երբ այդ պայքարը ձև մը, կապ մը պիտի ստանար։ Այդ վայրկեանն երկիւղալի կ՚թուէր ոչ միայն իրեն այլև ինձի համար։ Ի՛նչ սոսկալի անցքեր պիտի պարզէր այն ժամն իմ առջև։

Մոմը վառելով հատաւ և մտերս այրեց. ստիպուեցայ վար նետել զայն։ Ուրիշ մը վառեցի և չորս դին նայեցայ որ հնար մր գտնեմ լոյսն անշէջ պահելու։ Շատ ուրախ եղայ գտնելով կիսավառ մոմ մը աշտանակի մը մէջ որ վառարանին վրայ դըր-ուած էր։ Փչեցի խիտ վուիին որով վառած պատրոյդին բոլորտակն խորչը լցուած էր և մոմը՝ քիչ մը մարմրելէն և դիմադրելէն ետև՝ յաջողեցայ վառել։

Բօլին միշտ նոյն դիրքին մէջն էր, բայց այնպէս երևցաւ ինձ որ չունչը չուտ չուտ կ՚առնուր։ Իր մատերը ջղանձգօրէն կը չարժէին քունքին վրայ՝ իր թանձր սև մազերն յետկոյս նետե-լով, և կարծես բոլոր ճիգը կ՚թափէր որպէս գի վերակոչէ մը-տածութիւնն իր այն դատարկ գլխուն մէջ։ Պարտաւոր էի մի-այն սպասել և սպասելով իմ բոլորտիքս կ՚նայէի մտայղդ։

Բաւական լայնկեկ սենեկի մը մէջ էինք, որ ունէր եթէ ոչ նորաձև, գէթ պիտանի և կարևոր կահ կարասիս։ Սովորական քնակարանի ոճով զարդարուած էր։ Ցայտնի էր որ բաւական ժամանակ անբնակ մնացած պիտի լինէր, վասն զի ամեն կարա-սիի վրայ խիտ փոշի մը նստած էր։ Կարող եղայ մտովին անցե-լոյն դառնալ և յիշել սենեկին նոյն իսկ այն անկիւնն ուր կե-ցած էի, մինչդեռ մարդասպանները այնքան զբաղած էին մոլե-գին։ Կարող եղայ մատնանիշ ընել այն վայրն ուր ընկայ սաս-ռուն մարմնոյ մը վրայ և դողահար սկսայ որոնել ակամայ ոճրին հետքը յատակին վրայ։ Բայց եթէ դորգը մի և նոյնն էր, մութ կարմիր գոյն մ՚ուննենալով լաւ կ՚պահէր իր գաղտնիքը։ Սենե-կին մի ծայրը ծալածոյ դռներ կային — անշուշտ այդ դռներուն ետևէն էր որ լսեցի երբեմն այն գուժբերն։ Բացի այդ դռներն և ճրագը բարձր բռնելով սկսայ ներսը նայիլ։ Այդ սենեակն

ալ գրեթէ միւսին նման էր, բայց, ինչպէս որ լաւ դուշակէր էի, դաշնամուր մը կ'պարունակէր— թերևս ճիշտ այն դաշնամուրն՝ որու հնչիւններն սարսափահար աղաղակի մը փոխուեցան: Նոյն պահուն ինչ պաշարեց միտքս ոմն մղեց գիս, երբեք չպիտի իմանամ: Վար դրի մոմս և ներքին սենեակը մտայ: Դաշնամուրին փոշեվից ծածկոյթը բացի և մի քանի ձայն հանեցի: Անտարակոյս այն հին տեսարանին եղերական յիշատակներն էին որ զբաղեցուցին ինձ, առանց պատճառը նկատելու, հարևանցի հընչեցնել եղանակի մ'այն խազերն որ մեծ երգի մ'սկիզբն էին, այն երգին զոր լսեր էի երբ սենեկին դռնէն դուրս կ'դեզերէի, միտ դնելով դուսանին հեչտալուր ձայնին և զարմացմամբ հարցնելով իւրովի թէ՝ որո՞ւ ձայնը կրնայ լինիլ այն: Երբ այդ խազերը կ'հնչեցնէի ծալածոյ դռնէն դուրս նայելով՝ տեսայ Բօլինի արձանակերպ անշարժ կերպարանը:

Ձգային սարսուռ մը կարծես կ'շարժէր բոլոր իր մարմինը: Նէ դարձաւ և դէպ ինձ եկաւ, և աչերուն մէջ կար այնպիսի ակնարկ մ'որ ստիպեց գիս հեռանալ դաշնակէն՝ ահաբեկ դիտելով թէ արդեօք ինչ պիտի պատահի:

Լօդիկը զոր ճգած էի Բօլինի ուսերուն վրայ վար ընկեր էր: Նէ նստաւ դաշնակին աթոռակին վրայ և քաջալարժ մատերուվը ստեղնաքը զարնելով ուղիղ և շքեղ կերպով նուագեց նախերգն այն եղանակին որու միայն մի քանի թռուցիկ ձայները հնչեցուցեր էի:

Շանթահար մնացի: Մինչև այն օրը բնաւ Բօլին չէր ցոյց տուած թեթևագոյն ճաշակ մ'երաժշտութեան համար: Ինչպէս արդէն ըսած եմ, երաժշտութենէ միայն տաղտուկ և նեղութիւն կ'զգար: Իսկ այժմ կ'հանէր այնպիսի հնչիւններ որոց անհեթեթ կ'թուէր յուսալ այդ ընկերիկ և անլար դաշնամուրէն:

Բայց մի քանի ակրնական նուագներէ ետք զարմանքս դադրեցաւ: Որպէս թէ կանխաւ ծանուցած լինէին ինձ, դիտէի լիովին կամ մասամբ պատահելիքը: Մինչև անգամ պատրաստուած էի, երբ ժամը հասաւ ձայնակցիլ նուագարանին, լսել Բօլինի երգելն այնքան ճշտութեամբ որքան որ կ'նուագէր, սակայն, այն աղէտաբեր գիշերուան պէս, մի և նոյն բռնազբօսիկ կերպով երգելն: Այնքան կազմ ու պատրաստ էի, որ շնչասպառ այլայլութեամբ կ'սպասէի մինչև որ երգն յանգեցաւ այն խազին, որով կ'լրանար այն երբ առաջին անգամ լսեցի: Այնքան պատրաստուած էի, որ երբ վայրագաբար Բօլին կանգնեցաւ

ոտքի վրայ և վերստին արձակեց ահարկու ոդքն, իմ թևերովս իսկոյն չրջապատեցի դինք և տարի մօտակայ բազմոցին վրայ դրի։

Ինչպէս Բօլինի՝ նոյնպէս ինձ ներկայացան նորէն այն ահռելի դիւերուան դէպքերը։ Անցեալը վերադարձեր էր— Բօլինի աչերուն առջև ճիշտ ինչպէս որ այն պահուն իրմէ հեռացեր էր։

Այս վերադարձն ինչ արդիւնք պիտի ունենար — չհաբեր թէ աղէտարեր պիտի լինէր — նկատելու ժամանակ չունէի։ Իմ անընդհատ խնամոց կարօտ էր Բօլին։ Մօսկալի՛ էր իմ պաշտօնս։ Պարտաւոր էի բուռն ուժով բռնել զսպել դինք նոյն վայրը, պարտաւոր էի ո և է կերպով ամրոցել իր վիշտն և արգիլել իր աղաղակները։ Եւ այդ աղաղակներն այնքան բարձր կ'ինչէին որ կ'երկնչէի թէ մի գուցէ դրացիները լսելով վրդովին։ Եւ նոյն պահուն կ'մաքառէր նէ ինձի հետ, կ'ջանար հեռու մղել դիս և կանգնիլ։ Որչափ հնար էր ստուգապէս գուշակել իր մտածմունքը՝ գիտէի որ երբեմն պատահած իրողութիւնները վերստին իր աչքին կ'երևէին։ Վերստին կ'զսպէր դինք ուժգին բազուկ մը, հաւանօրէն մի և նոյն բազմոցին վրայ, վերստին իր դիմադրութիւններն հետզհետէ կ'թուլնային և իր աղաղակները տակաւ կ'նուազէին։ Կ'մնար միայն վերջին ահարկու հեծեծանոց կրկնութիւնն որպէս զի այս պատկերը կատարեալ լինի։ Այս տարբերութիւնը կար միայն հնոյն ու նորին մէջ որ այս անգամ իր վրայ տարածուած ձեռներն սիրալիր ձեռներ էին։

Վերջապէս Բօլին հանդարտեցաւ։ Իր ողբին յաջորդեց կատարեալ լռութիւն։ Այնպէս կ'թուէր որ վերստին կորոյս ամեն գիտակցութիւն։ Իմ միակ հոգս էր նոյն պահուն հեռացնել դինք ըստ կարի չուտով այս աղէտալի վայրէն։ Ամեն տեսակ այլանդակ մտածութիւններ և ցնորք կ'խուժէին ուղեղիս մէջ. ամեն տեսակ յոյս և երկիւղ կ'ցնցէին դիս։ Ի՞նչ պիտի լինէր արդեօք այս ամեն դիպուածներու բացատրութիւնն, եթէ երբէք կարելի լինէր դանել։

Իմ եղկելի սիրականս հանդարտ և անդորր կ'մնար։ Մտածեցի որ պարտաւոր էի թողուլ դինք մի քանի վայրկեան հանգչիլ և ապա փոխադրել։ Մեծ էր երկիւղս թէ արդեօք ինչ հետեւանք պիտի ունենար զարթումը։ Այսպէս իր ձեռքը առի և իմինիս մէջ սեղմեցի։

Ձրագը՝ որ իմ ետիս վառարանին վրայ էր, շատ աղօտ լոյս մը կ'սփռէր դիմացի սենեկին խորն, որու ծալածոյ դուներն կի-

սովին բաց էին, մինչդեռ միւս կէսն՝ Բօլինի պառկած բազմոցին եաւի կողմն, գոց էր։ Հետեւապէս՝ անկարելի էր ինձ իրեն մատ նստած տեղէս դիմացի տեսնելը։ Իրօք՝ մինչդեռ այն տեղ կ'նայէի երեսս նոյն տեսնկէն ասդին դարձած էր։

Իմ կնոջս ձեռքը մի քանի վայրկեան բռնեցի և ապա տարօրէն, անմեկնելի զգածում մը բոլոր մարմինս համակեց — տեսակ մը զգածում որով երբեմն մարդ կ'զգածուի երազի մէջ, ուր երկու անձեր կ'երևին և երազատեսը չ'գիտէ ստուգապէս թէ ո՛րն գաղափարներուն և գործերուն հետ իր ինքնութիւնը կը կցորդէ։ Գոհ մ'այնպէս երեցաւ ինձ որ երկեակ գոյութիւն ունիմ։ Թէպէտ լուծին դիտէի թէ մի և նոյն անձրուը նստած էի, թէ տակաւին Բօլինի ձեռքը կ'սեղմէի, սակայն կարծէի նաև թէ դաշնամուրին առջև բազմած էի, կիսբաց դռներէն կ'նայէի միւս սենեակն և թէ այդ սենեակն լի էր լուսով։

Այնքան լուսափայլ էր այդ սենեակն որ մի ակնարկով կարող էի նշմարել ամեն ինչ զոր կ'պարունակէր այն։ զատ զատ կահերը, պատերուն պատկերներն, պատուհանը մասամբ ծածկող մթին վարագոյրներն, հայելին կրակարանին վերև կախուած, մէջ տեղը դրուած սեղանը, որու վրայ խոշոր կանթեղ մը կը վառէր։ Այո՛, կարող էի այս ամենն և աւելին տեսնել։ Վասն զի սեղանին բոլորտիքը չորս մարդիկ նստած էին և անոնց երկուքին դէմքը կ'ճանչէի՛։

Այն մարդն որ իմ դիմացս էր — որ կոթնած էր սեղանին՝ ձեռները վրան դրած, որու դէմքին գծերն երկիւղալի զարմանք կ'յայտնէին, որու աչերն իրմէ քիչ մը հեռու առարկայի մը յառած էին — այդ մարդը Սէնէրին էր, իտալացի բժիշկը, Բօլինի քեռին և խնամակալը։

Այն մարդն որ Սէնէրիի աջ կողմն՝ սեղանին մօտ էր — որ կեցած էր այնպիսի դիրքով մ'որպէս թէ պատրաստ էր հատնական յարձակում մ'ետ մղել, որու դէմքն վայրագ էր ու զայրագին, որու սև աչերն կրակ ու բոց կ'տնէին — այդ մարդն անգլիացան Իտալացին, Մագտրին էր, կամ, ինչպէս այժմ կը անուանէր գինք, Անթոնի Մարչն, Բօլինի եղբայրն էր։ Սա՛ս կ'նայէր, Սէնէրիի պէս, մի և նոյն առարկային։

Իսկ աւելի խորը նստող մարդն — կարճ հաստակազմ մարդ մ'որ այտին վրայ սպի մ'ունէր — օտարական մ'էր ինձի համար։ Նա Սէնէրիի ուսին վրայէն մի և նոյն ուշգրութեամբ կ'նայէր։

Եւ այս անձերուն նայած առարկան պատանի մ'էր, որ իր աթոռէն վար ընկնելու վիճակին մէջ կ'երեւէր և որու ձեռքն ջղաձգօրէն կ'բռնէր դաշոյնի մը դաստապանն որու ծայրն իր սրտին մէջ մղուած էր, այս մղուած էր գիտէի չեշտակի հարուածով մը իր վրայ կեցող մի անձի կողմէ։

Այս ամենը տեսայ իրարպէս մի րոպէի մէջ։ Մէն մի դերասանի դիրքը, բոլոր չրջակայ տեսարանն ըմբռնեցի որպէս թէ մի ակնարկով պատկերի մը նպատակն ու իմաստը կ'ըմբռնէի։ Ապա Բոլինի ձեռքը թողուցի և ոտքի վրայ կանգ առի։

Ո՞ւր էր լուսափայլ սենեակն. ո՞ւր էին նշմարած դէմքերս. ո՞ւր էր այն եղերական տեսարանն որ իմ աչքիս առջև կ'պարզուէր։ Բոլորն անօսր օդին մէջ աներևոյթ եղած էին։ Մոմն ալ զօտագին կ'վառէր իմ եռևս, դիմացի սենեակն մութ էր։ Բոլին և ես միայն այն տեղի կենդանի արարածներն էինք։

Անդուլ երազ մ'էր այս։ Թերևս ոչ անբնական երազ մը ներկայ պարագայից մէջ։ Դիտնալով ինչ որ պիտէի արդէն այն ոճրին վրայ որ այս վայրն տեղի ունեցած էր, ստոյգ լինելով որ Բոլին կերպով մը ներկայ գտնուած էր երբ այդ ոճիրն ի գործ դրուեցաւ, նոյն դիշեր պատահած իրողութիւններէ զրգռուած — Բոլինի այլանդակ պտոյտն, իր յանկարծական գուսանութիւնը, նոյն իսկ արդէն լսած երգս, այդ երգն իր ահռելի վախճանով — այս ամենը միտ բերելով զարմանալի չէ եթէ այսպիսի տեսարան մ'երևակայեցի, և միայն ինձ ծանօթ և իմ Ջուսառ կնոջ հետ յարաբերութիւն ունեցող անձերն առնլով անոնց կենսանման նկարները գծեցի։

Բայց ենթադրելով որ մարդ մը կրնայ երազել նոյն երազն երկու և թերևս երեք անգամ, չէ կարելի գտնել յիշատակութիւն մ'որ նոյնն երազած լինի այնքան յաճախ որքան որ կամի։ Եւ սակայն այդ բանն ինձ պատահեցաւ։ Վերստին բռնեցի Բոլինի ձեռքը և վերստին պահ մը սպասելէն ետև մի և նոյն տարօրէն զգացողութիւնն ունեցայ և մի և նոյն ահռելի տեսարանն իմ աչքիս երևցաւ։ Չէ թէ մի, չէ թէ երկու, այլ տասը պատահեցաւ ինձ այդ բանն, մինչև որ, թէև սկեպտիկեան էի, ինչպէս որ եմ դեռևս այս տեսակ խնդիրներու մէջ, բայց և այնպէս սոսկալած էի հաւատալ որ խորհրդաւոր կերպով մը նոյն պահուն կ'տեսնէի ճիշտ այն տեսարանն որ երևցած էր օրիորդին առջև երբ յիշողութիւնն, թերևս բարերազդօրէն, թռած գացած էր իրմէ և բանականութիւնն անվնաս մնացած էր։

Միայն երբ մեր ձեռներն իրարու կապուած լինէին այդ տեսարանը մեզի կ'ներկայանար, և այդ իրողութիւնն զօրացուց իմ տեսութիւնս այս մասին։ Այն ժամանակ ըզգացի — այժմ ևս կ'զգամ որ ճշմարիտ է այդ տեսութիւնս։ Սակայն անկարող եմ մեկնել թէ իմացական կամ ֆիզիքական ինչ տեսակ կազմակերպութիւն այդ ներգործութիւնն յառաջ կ'բերէր։ Ի'նչ որ կամիս անուանէ զայն, ուշթափական, հեռատեսական ազդեցութիւն, այս իրաւ է որ պատմութիւնս ճշմարիտ է։

Բօլինի ձեռքն քանիցս բռնեցի, և քանի բռնէի մի և նոյն լուսավայլ սենեակը կ'տեսնէի։

Նման կենդանի պատկերներու անշարժ նկարներուն՝ մլչտ և առանց փոփոխութեան դիրքի կամ բացատրութեան, կ'տեսնէի Սէնէրին, Մագարին և խորը նստող մարդն որ ակնապիշ կ'նայէին իրենց գոհին։ Այս վերջնոյն տեսքը մտատանջեցիւ։ Թէև դէմքին վրայ մահատիպ տագնապը նկարուած էր, բայց կարող էի տեսնել որ չնաչխարհիկ գեղեցկութիւն մ'ուներ։ Անչուշտ կերպարան մը պիտի ուներնար այդ պատանին որու սիրով կը նային կիները, և մինչև իսկ այս սոսկալի տեսարանին առջև՝ վշտալի խորհուրդ մը զարկաւ միտքս երբ կ'դիտէի թէ արդեօք ինչ էր այդ պատանւոյն յարաբերութիւնն այն օրիորդի հետ որ յանկարծ տեսած պիտի լինէր անոր մահակիր անկումը։

Ո՞վ տուած էր այդ մահաբեր հարուածն։ Անչուշտ Մագարի, որ՝ ինչպէս ըսի, կեցած էր անոր մօտաւորագոյն կողմն այնպէս որ կարծես թէ յարձակման մը կ'սպասէր։ Իր ձեռքը թերևս թողած պիտի լինէր դաշոյնին դաստականն։ Այնքան ուժգին մղած պիտի լինէր դաշոյնն պատանւոյն սրտին մէջ որ սայրն խորը մտած և մահն հարուածին հետ նոյն ժամայն յառաջ եկած էր։ Բօլին այս տեսած պիտի լինէր, և թերևս այժմ կ'տեսնէր, և այդ արիւնալի տեսարանը, տարօրէն զօրութեամբ մը, ինք կարող էր ինձ ցոյց տալ ինչպէս անձ մը ցոյց կ'տայ պատկեր մ'ուրիշ անձի մը։

Այն դիշերուանէ ի վեր անդադար կ'զարմանայի թէ ինչպէս բաւական կորովամտութիւն ունեցեր էի այն տեղ նստիլ և կըրկին ու կրկին վերակոչել, իմ քով գտնուող անզգայ օրիորդին օգնութեամբ, այդ ուրուային տեսիլը։ Անտարակոյս անցեալ հեռաւոր դիշերուան մը գաղտնիքը թափանցելու հրատապ իղձս, անշուշտ իմ կնոջս իմացականութիւնը խանգարող հարուածն ճշտիւ լսանալու փափաքս, այդ մարդասպանութեան

հաւար ղպացած զայրոյթս և ոճրագործներն արդարութեան յանձնելու յոյսս էին որ ինձ այժ կ'տային այդ տեսարանն կըրկին ու կրկին պատկերել իմ առջև, մինչև որ գոհ եղայ իմանալով ինչ որ այդ համր տեսարանն կարող էր ինձ յայտնել, մինչև որ սիրտս սկսաւ մարմոքիլ դիտելով որ Բօլինն այնքան ժամանակ այդ վիճակին մէջ թողուցի։

Ուսաի չուտ մը լոդիկով ծածկեցի իր մարմինն, թևերուս մէջ առի զինք և սենեկէն դուրս տարի իջնելով սանդղէն մինչև տան դուռը։ Արդէն ուշ էր։ անցորդի մը միջոցաւ չուտով երկանիւ մը բերել տուի և սուղ ժամանակի մէջ տուն հասայ. անկողնին վրայ դրի Բօլինն որ դեռ անզգայ էր։

Երբ այդ ազետաբեր գանձն դուրս ելանք Բօլին չէր կարող այլ ևս հաղորդել ինձ այն խորհուրդներն զոր տարօրէն զօրութեամբ մը կ'հաղորդէր։ Այժմև այնուհետև իր ձեռքը կ'դանդէի, բայց ոչ երազ և ոչ անբջային աեսիլն կ'վրդովէր իմ միտքս։

Ահա այս բանն է զոր չեմ կարող բացատրել — այն գաղտնիքն է որու ակնարկեցի երբ պատմութիւնս սկսայ։ Պատմեցի ինչ որ պատահեցաւ։ Եթէ իմ պարզ խօսքերս անբաւական եղան հաւատ ներշնչել, պարտիմ գոհ լինիլ որ այս կիտին վրայ միայն թերահաւատներու կ'հանդիպիմ։

(Շարունակելի)

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ

Եթէ վերհանձնութիւնն, ինչպես կ'ըսէ հեղինակ մը, մեծ հոգիներու ձիրքն է, դիմատրութիւնն անմահից չընորհն է։ Այս չնորհով լիուլի օժտուած է Օսմանեան պետութեան վեհապետն, Սուլթան Համիտ խան։ իր գահակալութենէ ի վեր՝ ոչ միայն ապդայէն ու բարենորոգիչ խորհուրդներ, մեծաշուք յառաջդիմական գործեր, միջազգային փափուկ խնդիրներու լուծումն, բարեսրտութեան բխուքաղ չքեղ օրինակները կ'փառաւորեն իր սի-

բելի անունն, իր անձանձիր հոգածութիւնն իր Տէրութեան բարւոյն և ամեն հպատակներու բարօրութեան համար, ինչպէս նաև իր վեհանձն բնաւորութիւնն ու քաղաքագիտական հանճարը կ'հռչակեն, այլ և Օսմանեան գահուն նոր փայլ ու չքեղութիւն կ'ընծայեն իր արդարասիրութիւնն ու գթասիրութիւնը։

Ահա այս աննման կայսերական գթասիրութիւնը կը տարածուի այս անգամ ևս դրեթէ հարիւրի չափ հայ բանտարկելոց վրայ, որ միամտաբար ընկած էին օտարոտի մեքենայութեանց ծուղակը։ Այս կայսերական գթասիրութեան չնորհն շատ աւելի ազդեցիկ ներգործութիւն պիտի ունենայ քան ո և է օրինական տնօրէնութիւն, վասն զի այդ չնորհն կ'գրաւէ կ'չղթայէ սիրտերը որ՝ արդէն հաւատարմական պարտաւորութեանց միչտ ընդունակ, կ'զդան միանգամ ևս թէ քանի անգնահատելի է վեհ։ Ինքնակալի հայրական հոգածութիւնն, թէ հայատեղութեան լինչ մեծ ոճիր է չըմբռնել որ Հայոց ամենէ նուիրական չահերն, իրենց ազգային եկեղեցին, իրենց բազմադարեան լեզուն, իրենց դրականութիւնն ու էութիւնն առաւելապէս Օսմանեան Գահոյից ներքև դրատած էն վաղուց անտի անքոյթ ապաւէն և պիտի դտնեն միչտ զօրաւոր պաշտպանութիւն։

Հետևապէս համայն Ազգը պարտի միչտ չնորհապարտ մնալ վեհափառ Օուլթանին, և իր չնորհապարտութեան իբրև գործնական ապացոյց խաղաղասիրական ոգւով նըկրտիլ ազգային բարոյական և մտաւորական յառաջդիմութեան մէջ, որու միչտ քաջալերը կանգնած է կայսերական լուսամիտ և փառաւոր քաղաքականութիւնն և որով կարելի է միայն Օսմանեան Տէրութեան զարգացման և բարօրութեան գործին աջակից և համերաչխ դտնուիլ։

ԻՋՄԻՐԻ ՎԻՃԱԿ

. . . Խմբագիր,

Վերջապէս վերադարձայ — Էէրով պարով չվերադառնայիր կը մրմնջէ դրացիս — և առաջին գործս եղաւ ձեռք ձգել Ա. Մաղ. ըդ թերթերն որոցմէ զուրկ մնացեր էի ի Ս . . . , և փնտռել Իզմիրի վրայ լուրեր։ Ո՛չ ինչ, մեկնելէս ի վեր, գրեթէ ոչ ինչ չէ գրուած ամսագրիդ մէջ մեր տեղական գործերու վրայ, որպէս թէ ոչ հայ և ոչ հայու գործ գտնուէին քաղաքս։ Զարմանալի երևոյթ։ Ի՞նչ, մէկէ գրելու նիւթ չկա՞յ։ Մի՛թէ այդ լռութեան պատճառն ազգային գործերու թէ ոչ սրտերու թեթևութիւնն կամ չգոյութիւնն է, չ'լրցայ հասկնալ։ Բայց ինչ որ է, թերթ մը պարտաւոր է գոնէ անցողակի ակնարկ մը ձգել երբեմն իր գտնուած տեղւոյն վրայ։ Եթէ աչք զարնող բան մը չգտնէ, գէթ կրնայ քարափը պարպիլ, որ ոմանց համար բոլոր Իզմիրն է, և նաւահանգիստը մտնող ելնող նաւերը հարիլ։ Թերթդ սովորաբար հեռուները կ'թռի, ազգային ընդհանուր հարցեր կ'չօշափէ, խորը մտնել չհամարձակելով, և մտաւոր իրողութիւններ զանց կ'ընէ։ Այդ ուղղութիւնն արդի հարցասիրական և դրական մեթոտին հակառակ է։ Մեր ականջները խլացան լսելով չարունակ, թէ պէտք է ծանօթէն անծանօթին, մտաւորէն հեռաւորին դիմել քայլ առ քայլ։ Վերացականն ու ընդհանուրը հաճելի չեն ամեն մտքի համար, մանաւանդ ֆալսո՞ ու բամպակի հաչիւներով լեցուած գլուխներու համար։ Բայց աստի՝ կանոն է որ նախ թերթ մը հրատարակուած տեղւոյն գործիչներուն, գործերուն և գործելիներուն վրայ խօսի, լաւը ու վատը մատնանիշ ընէ և հասարակաց կարծիքը լուսաւորէ, ապա, եթէ կամի, հանրային խնդիրներու մէջ ալ թռղ թաւալի։ Մեր քաղքի զանազան սովորութիւններն ու դէպքերը քանի՛ քանի վէպերու նիւթ ալ կրնան հայթայթել . . . ։ Կ'տեսնես, բարեկամ, որ սրտնեղութեամբ կ'գրեմ և քեզ սիրող շատ լըրջամիտ հայերու հետ այդ վերապահութիւնդ կ'պարսաւեմ։ Իրաւացի է, միւս կողմէ, ամէնին խօսքն — Սովոր չէ դերձակն իր հագուստին, սափրիչն իր մօրուսին, բժիշկն իր առողջութեան

հոգ տանիլ։ — Թերթդ ալ անփոյթ է իր բոլորտիքն անցնող դարձող իրերուն։ Մայր Աթոռն, Սսոյ Աթոռն, Երուսաղէմի Աթոռն, կ՚ըսես Պոլսոյ Աթոռի վրայ չարունակ գրչովդ կ՚ելլես կ՚իջնես, իսկ այդ Իզմիրի Թերթդ, օրինակի համար, Իզմիրի Առաջնորդական Աթոռին վրայ, որ թափուր է տարիներէ ի վեր, ոչ ելած ունի և ոչ նստած . . . ։

Անշուշտ՝ կ՚դուշակեմ առարկութիւններդ։ Պիտի ըսես նախ՝ թէ Թերթդ օրագիր չէ, թէ հանրային խնդիրներ ու շահեր աւելի կարևոր կ՚սեպէ քան թէ մասնաւոր բաներ, թէ փոքրիկ հասարակութեան մը մէջ որ սովորաբար փոքրիկ տիպուածներով զբաղիլ կ՚սիրէ և անձնական փոքրիկ կրից մէջ կ՚հրճուի, չարժեր ճշմարտասէր քննադատի պաշտօն վարել, ապա թէ՝ նօդուտ է մանաւանդ հիմակ արդ ազն ու իրաւը պաշտպանել և պատահած ամեն ազգային խնդրոյ աղնիւ, լայն և չահաւէտ կողմը ցոյց տալ, քանի որ Եպիմենիտէս մ՚անգամ եթէ խօսէր ու յորդոր կարդար Թուք ու մուր պիտի կրէր այս անճուկ միջավայրի մէջ, ուր անճուկ չահեր այժմ անճուկ նկատումներու միանալով ուղիղ սկզբունք, խորհուրդ և հանրային օգուտ ի բաց կ՚վանեն։ Լաւ բարեկամ, այդ բոլոր փաստերդ դրամ մը չեն ածեր։ Ես կ՚ճանչեմ չատ լրջամիտ հայրենակիցներ որ պիտի հետաքրքրին կարդալով տեղւոյս վրայ լուրջ և քննասիրական դրուածներ։ դիտեմ որ, ինչպէս մարդ մը, նոյնպէս ժողովուրդ մ՚օրքան ազեղ դծեր ուննայ կ՚փափաքի իր դէմքը տեսնել հայելիի մէջ և հաւաստի եղիր որ հայելի տեսքը կրնայ ստէպ սրբել տալ չատ ազատեղի բիծեր։ Ուրի՛ երբեմն այդ հայելին եղիր և թոյլ տուր ինձ որ չարունակեմ ցոլացնել անոր մէջ պատկերներ՝ մեր ազգային կեանց այլ և այլ գոյներովը նկարուածս։ Յարմար առիթ մ՚է ամանորն։ Ահա այժմ հարևանցի տեսութիւն մ՚անպատեհ չինիր, կարծեմ. վերջէն, եթէ նորէն դուրս չերթամ, կարելի է մանր ու բարակ մաղել զանազան իրեր։

Իզմիրի համբաւը, գիտես, մեծ է և հայք, թէև փոքրաթիւ՝ բաւական նշանաւոր դիրք մը կ՚բռնեն այլասեռ, այլակրօն և այլալեզու հասարակութեանց մէջ, որ, պէտք չէ մոռնալ, յառաջադէմ են։ Այս դիրքն, որ այնքան մտադրութեան արժանի է որքան որ հայք ունին մրցիլ անդուլ օտար տարրներու հետ դործունէութեան ասպարիզին մէջ, քնչ բանի կ՚պարտաւորին, արտաքին թէ ներքին հանդամանաց։ Անշուշտ թէ միտք և թէ

մուսին, բայց առաւելապէս միջավայրին։ Շահաստանի մը մէջ, եւրոպական յարաբերութեանց մի կեդրոնն, այլ եւ այլ գործունէի, արթուն ու ճարպիկ ժողովրդոց չմոռաքն Իզմիրցի հայն երէկ անտարբեր, դանդաղ եւ անզգայ մնար ի բնէ անոնց իր շրջապին տեսած չարժման, երէկ իր ազգային յատկանիշները պահելով չմասնակցեր հասարակային գործունէութեան՝ անտարակոյս ոչ միայն պիտի կորուսեր իր ազգութեան գրոշմն, այլ եւ խեղճ, ողորմելի վիճակի մը մէջ պիտի մնար եւ չպիտի յաջողէր իր ազգային հիմնարկութեանց քիչ շատ տալ այն չուքն որ արդիւնք է գլխաւորապէս նիւթական բարօրութեան։ Ուրիշ խնդիր է թէ հասած է հետզհետէ այն բարձր զարգացուն կացութեան որու պարտաւոր էին մղելզինք հին ու նոր նպաստաւոր պարագաներ։ Այդ խնդիրները լուծելու համար բաւական է զուգակշռել հայն իր վիճակակից հասարակութեանց նիւթական, բարոյական եւ մտաւորական գրութեան հետ։ Զգալի տարբերութիւններ պիտի տեսնուին եւ հայ բնաւորութեան յոռի կողմերն, դանդաղկոտ, չուսումնասէր, օտարասէր, խռովասէր եւ անտնտեսագիտական հակումներ երեւան պիտի գան, հակումներ՝ որոց մեր հասարակութեան հին եւ նոր պատմութիւնը կը վկայէ եւ որոց պատճառաւ անընդհատ յառաջդիմութեան երես տեսած չունի։ Եւ ահա այժմեան միջոցն իսկ, թէ ազգային եւ թէ անտեսական տեսակէտով, կ՚հաստատէ մեր դիտողութիւնը։ Ներքին եւ արտաքին վրդովիչ ազդեցութիւններ միշտ խոչընդոտներ բերած են իր քայլերուն եւ մեծամեծ կորուստներու առիթ եղած։ Յորչափ ինքնօգնութեան եւ ապահովրդոնացման գրութեամբ ինքնուրոյն չարժած է իզմիրցի հայն իր առանին գործերուն մէջ, ցորչափ իր իսկական շահուց եւ իրաւանց երաշխիք լինելով վարած է իր գործերն, ցորչափ միաբան ոգւով՝ ազգային պատուոյ, լուսաւորութեան եւ ճշմարտութեան խորհրդոց միտ դնելով անօրինած է խնդիրներ որ վերաբերութիւն ունեցած են իր մտաւոր եւ նիւթական զարգացման հետ, ի բաց վանելով խոչեմական, անձնական թելադրութիւններ, յաջողութեան եւ զարգացման բարիքը վայելած է։ Իսկ ընդհակառակն ամեն անգամ որ այս խմաստուն եւ գործնական ուղղութենէ չեղած է, արդէն ձեռք ձգած մտաւորական եւ նիւթական առաւելութիւններն ի կորուստ մատնած եւ վերսին սմսաւելով վերսկսած է այն ճամբան որմէ արդէն անցած էր։

Եւ ահա մեր ընտանեկան կեանքը չէ ընդհանրապէս ինչ որ

փափաքելի էր որ լինէր՝ հեռի տնաւեր չռայլութենէ, օտարասիրութենէ և ազգաշինաս յարաբերութիւններէ· ահա մեր կրօնական դասը չէ, բացառութիւններն ընդունելով, ինչ որ Աւետարանի ոգին, քահանայական կոչումն և մանաւանդ ժամանակիս լուսաւորութիւնը կ'պահանջեն որ լինին, բարոյասէր, խաղաղասէր և դաստիարակիչ միջնորդներ· ահա մեր ուսումնական դասը չէ ինչ որ ժողովրդեան մտային վիճակն և գիտութեան ոգին պարտ կ'դնէ իրենց վրայ որ լինին, համեստ, չրջահայեաց, լաւ խորհուրդներու և ձեռնարկներու ջատագով, ճշմարտութեան անվեհեր պաշտպան, կրթութեան գործին ազդեցիկ սատար, ազգաշէն գաղափարներու ծաւալիչ և անհաչտ թշնամի այն իմաստակներուն որ կ'խանգարեն ու կ'ծաղրեն ինչ որ նուիրական է մեղի համար, ինչ որ իրրև ազգային յատկանիշ պարտ է սիրել ու պաշտել: Հապա՛ հայ արհեստաւորներու դասն որ ընդհանրապէս արդի ճարտարական և չհամիցյական ոգւոյն անտեղեակ՝ կ'շարունակէ հին ղրութեամբ գործեր որ այժմ անշահաւէտ են և անփոյթ կ'գտնուի երաղեկ լինիլ այն ծանօթութեանց որ անհրաժեշտ են ապրուստի միջոցները կատարելագործելու կամ նոր աստպարէզներ գտնելու· հապա՛ մեր վաճառական դասն, որու մի քանի ներկայացուցիչներն թէև ճոխ ու փառաւոր, նոր նոր դռներ բանալու և հեռաւոր երկիրներու հետ գործողութեանց չրջանն ընդարձակելու անգոր կամ վեհերոտ ու անճարակ, թոյլ կ'տայ որ օտարներ զբաւեն իր սահմանին մէջ անգամ շահաբեր ձեռնարկներ և վաճառանոցներ, և ստէպ, համերաչխութեան ոգւոյն հակառակ, կատաղի մրցում մը կ'սկսի այնպէս որ ստորադաս հայ վաճառականներու կործանման առիթ կ'լինի:

Եւ վերև յիշուած վրկաւէտ պայմաններու պակասութենէ է որ անչահ և նորելուկ սովորութիւններ, կապկային նմանութիւններ մուտ կ'գտնեն մի շատ հայ ընտանեկան չրջաններու մէջ, այս է պատճառն, որ ազգային գործերն խառն ու չխոհ վիճակի մը պարբերաբար կ'մատնուին, որ օր ըստ օրէ տգէտ, անանուն, բաղդախնդիր մարդիկ քահանայական և ուսուցչական պաշտօնին կ'հրաւիրուին, որ ազգային և կրթական վարիչ պաշտօններու կ'կոչուին անփորձ, ինքնամոլ, դաւաչէր և անպատկառ մարդիկ այնպէս որ, ի վերջ՝ կ'դադրին ամեն համաձայնութիւն և համերաչխութիւն որ պարտին տիրել հայ հասարակութեան, վերին, միջին և ստորին դասակարգերու մէջ,

նիւթական, մտային և բարոյական ոյժերու մէջ, աշատ ասպա-
րէզ բանալով վրիժառուԹեան, երկպառակուԹեան, փոքրո-
գուԹեան և տգիտուԹեան։

* * *

Այս անգամ յատկապէս պիտի խօսիմ իզմիրի հայոց առև-
տրական գործունէուԹեան վրայ։ Տարակոյս չկայ ԹէՀ հայք ուր
որ գաղԹած են — և սովորաբար ծովեզրեայ ապահով երկիր-
ներ կ'ընտրեն — Խրիմ, Իտալիա, Թրիէստ, Հոլանտա, Կ. Պոլիս,
Իզմիր եւն, լաւ ևս համարած են այլ և այլ ճարտարուԹեանց
մէջ միջնորդ քան արտադրիչ կամ ձեռնարկու լինիլ։ Գործա-
տէր մ'աւելի մեծ հմտուԹեան ու փորձառուԹեան կարօտ և
աւելի ծանր պատասխանատուԹեան ենԹակայ է քան պարզ
վաճառական մ'որ ղրամագլուխ կամ վարկ ունենալով բաւա-
կան կ'սեպէ տեղական պիտոյից տեղեկանալ, առաջարկի և
խնդրարկի (offre et demande) ընԹացքը դիտել և ըստ այմ
իր հաչիւները ընել։ Առևտրական ճիւղին մէջ անգամ մեծ,
ընդարձակ և յանդուգն չհատիտական խորհուրդներ ու ձեռ-
նարկներ հայկական յոյլ ու վեհերոտ բնաւորուԹեան և ան-
հեռատես իմացականուԹեան յատուկ բաներ չեն։ Ոչ այնքան
տնտեսական, հաչուական և քաղաքական ուսմանց որքան բաղ-
դին ներգործուԹեան և իրենց դրացւոյն կործանման վրայ ե-
րենց չահու հաւատն հիմնող ժողովուրդներն այսպէս են։ Գոր-
ծունէուԹեան սահմանափակ չրջան մը կ'ընտրեն և անոր մէջ
կ'դառնան ու կ'դառնան չարունակ ու միօրինակ, առանց դի-
տելու որ աւելի ճարպիկ ու ներկուռ ժողովուրդներն ոչ միայն
լայն չրջաններու մէջ կ'գործեն այլ և նորեր կ'ստեղծեն։ Զար-
մանալի չէ ուրեմն եԹէ իրենց այս հնաոճ և մնայուն յատկու-
Թեանց պատճառաւ զրեԹէ ամեն ուրեք, Հնդկաստան, Հոլան-
տա, Իտալիա եւ աեղի տուած են աւելի առոյգ, աւելի ժպիրհ
ու ճարտար ոյժերու առջև առևտրական ասպարիզին մէջ, այն-
պէս որ այժմ օտար երկնից ներքև տեղ տեղ իրենց վաղեմի
առևտրական ճոխուԹեան հետքն և հազիւ միքանի ներկայա-
ցուցիչներ Թողած են. « — Է՛հ, ալ հին չահերը չմնացին, կ'ըսէ
մեր հնամիտ հարուստն. — Անշուշտ կոյր ժամանակներն ան-
ցան, կ'պատասխանէ նոր հայը, բայց մեր աչերը դեռ չբացուե-
ցան նոր լոյսին։ — » Անտարակոյս կրօնական, քաղաքական

պատճառներ ևս կան մի շատ հայ գաղթականութեանց անկման մէջ, այլ մեծագոյնը պարտ է վերագրել մեր ազգային բարեկարգութեան և կրթական վիճակին մէջ։

Այժմ իզմիրի հայ գաղթականութիւնը կարևորագոյն տեղը կ'բռնէ առևտրական տեսակէտով և անշուշտ այսօր մեծ մասամբ փոքր Ասիոյ ոչ միայն առևտրական այլ և մշակական և տարածական հարստարութեանց աէրն ինք սիրտ լինէր իր դրից բերմամբ, եթէ մէկ կողմէ ներքին արտադրութեանց արդիւնաւորութեան այժ տար դրամական հիմնարկութեանց միջոցաւ, և միւս կողմէ նոր յարաբերութեանց դռներ բանար օտար երկիրներու հետ։ Զեմ ուրանար որ հայ տարրը, թէև թուով անբաւական, այժմ կ'տիրէ տեղւոյս արտածական և ներածական գործառնութեանց վրայ. հայ վաճառականներն են որ մեքսային տրոյց գրեթէ 80% կ'վճարեն Տէրութեան, մինչդեռ բնիկ յոյն, տաճիկ և օտար վաճառականները մնացած մասը։ Այս անժխտելի ապացոյց մ'է իրենց առևտրական գերակշռութեան, բայց այդ գերակշիռ առաւելութիւնն լոկ մի քանի հարուստ տուներու ձեռքն է, և շահամրցական եռանդեան ոչ այնքան նախանձելի երևոյթ, քանի որ երկրորդական հայ վաճառականներ հետզհետէ կ'տուայտին . . . . Եթէ հարևանցի ի նկատի առնենք Այտընի նահանգի արտածութեան նիւթերն, սիրտ տեսնենք որ ափիոն, խոպոպին, քամպակ, ցորեն, գարի, ձիաթօփ, ընուզ, չէր, մեծ մասամբ հայ վաճառականաց ձեռօք կ'ծախսուին, և զարմանալի է որ չմիւի առուտուրն, որու արդիւնքը տարին վերև յիշուած բոլոր ապրանաց դրամական արժողութեան կ'մօտենայ, այս է 1,500,000 ոսկւոյ, աննշան տարբերութեամբ, հայոց շահադիտութեան առարկայ չէ եղած ցարդ։ Հետամուտ չեն նաև հայք նահանգիս հանքային ձեռնարկներու, որ անշուշտ սեւեի հըմտութիւն ու աշխատութիւն կ'պահանջեն, այնպէս որ փոքր ու ճանկանէդ արտածութենէ մեծատէս կ'օգտին Եւրոպացիք, ինչպէս նաև Տպռոռակէն, որ նահանգիս նշանաւոր բերքերէն մին է, իսկ գոբէն Թրքաց և Եւրոպացւոց չահու մեծ աղբիւր է։ Բայց ներածութեան գործողութեանց մէջ հայը յաղթական սլաքը կ'տանի միւս բոլոր հասարակութեանց վրայ, վասն զի մանաւորապէս ճանիֆաքուրչի, երկաթի, ըտեղչի և փոքր-ինչ տուրևառի մէջ բնաւ մրցակից չունի. և վերջերս գերմանական և աւստրիական ապրանաց մուտքը քաղաքս հայոց ձեռօք աղդու մրցման տեղի տուաւ ֆրանկաց չուկային դէմ, ուր գլխաւորապէս այդ տեսակ ապրանք կ'վաճառուին։

Հայոց նիւթական հարստութեան ակներև նշաններէ մին է իրենց կալուածական սեփականութիւնն, որ անհամեմատ աւելի արժէքը ունի քան միւս ազգաց։ Սակայն եւրոպական և տեղական օտար արհեստներու և ճարտարութեան հետ չէ կարելի բաղդատել հայ արհեստաւորութիւնն որ չատ՝ խոսուր դրութեան մէջ կ՝գտնուի, քանի որ արհեստներէն ոմանք կատարելագործուելու կարօտ են և ոմանք ապագայ չունին։ Հայ ոսկերչին, դերձակին ու դարբինին դէմ ծանր է արդարև օտար շահամոլութիւնն։ Եւ մինչդեռ մեր մէջ կօշկակարը, վերմակագործը, սափրիչը գործարութեամբ կ՝յառաջանան նշանաւոր, յոյն արհեստաւորները միջոցը գտած են հարստանալու և Եւրոպայի ապրանաց դէմ մրցելու։

Քաղքիս բժշկական և վերաբուժական ատուար կարգերուն մէջ, թէև փոքրաթիւ, սակայն չատ մեծարելի և նշանաւոր դիրք բռնած են մի քանի հայ անուանի բժիշկներ իրենց գիտական հմտութեամբ և փորձառութեամբ, և մի քանի փաստաբաններ իրենց օրէնսգիտական ճարտարութեամբ և ուղղութեամբ։ Ոչ նուազ պատիւ կ՝բերեն հայ անուան և Տէրութեան այն պաշտօնաւորներն որ իրենց ընտիր բարեմասնութեամբք, օրէնսգիտական և դիւանագիտական հմտութեամբ ոչ միայն արժանապէս կ՝վարեն իրենց փափուկ պաշտօններն այլ և իրենց ազնիւ բնաւորութեամբ քաղքիս հայ և օտար հասարակութեանց համարումն ու համակրութիւնը կ՝վայելեն։

Նամակս երկարեցաւ. ուրիշ անգամի կ՝թողում հայ հասարակութեան ուրիշ հանգամանաց վրայ դրելիքս։

25 Յունվար, 1891 ՍԻՍԱԿ
Իզմիր

ՄԿՐՏԻՉ ԼՄԻՆ

Գիտութեանց կարգին մէջ հետզհետէ կարևոր դիրք մը կը բռնէ այն պատմագրութիւնն որ կ՝հետաքրքրէ մարդկային ապագի այլ և այլ մտային և ընկերային յեղաշրջումներն և ժողո-

վրդոց ղարդացման օրէնքը ըստ կարի կ'ճշտէ։ Հայ ազգն ևս ունի իր անցեալ կենաց վերաբերեալ դանձեր որ ոչ միայն իր պատմական արձանագրութեանց մէջ նշանակուած են, թէև ատիպ հարևանցի ու կիսատուր, այլ մանաւանդ իր պատմութեան թատրը եղող զանազան աւերակներու տակ թագուն կը մնան մեծ մասամբ և հնասիրական հետաքննին խուզարկութեան կարօտ են։ Մեհեաններ, տաճարներ, դամբաններ, վկայարաններ, վանքեր, իրենց վիճակներուն տակ, ունին տակաւին չատ լոյս սփռել մեր անցելոյն մութ խորշերուն և հայկական կենաց զանազան հանգամանաց վրայ, սակայն այդ խուզարկութիւնն ոչ այնքան հայու որքան երբեմն եւրոպացի հնագէտներու և պատմագէտներու ձեռօք կատարուած է մասամբ, ի շնորհս հմուտ հայ պատմագիրներու դրուածոց, որ օտար լեզուաւ գրուելով եւրոպական պատմագիտութեան ուշադրութիւնը գրաւած են։

Ա.յսպիսի հայ պատմագէտներ, արդի պատմական մեթոտին ներհուն, չատ ցանցառ են մեր մէջ, և ասոնց կարգէն կ'համարուէր Մկրտիչ Էմին, որ իր ուսումնասիրութիւնն այս ճիւղին նուիրեց և ռուսերէն ու ֆրանսերէն լեզուաւ թարգմանելով զանազան պատմական և կրօնական հայերէն երկեր և ձեռագրեր հայերէնագէտ եւրոպացի դիւանականներու հարցասիրութեան ճարակ տուաւ։ Եւ ահա այս բազմարդիւն ուսուցչին և հմուտ պատմաբանին մահը կ'ողբայ այսօր հայ Ազգն որ այնքան կարօտ է այս տեսակ գրական բանուորներու։ Ք. Պատկանեանի մահուանէ ետք՝ ծանրագոյն կորուստն է մեզի համար Մկրտիչ Էմինի մահն որ պատահեցաւ դեկտ. 13ին։

Ի սկզբան բաւական արկածալից կեանք մը կ'անցնէր Բնիկ Նոր Ջուղայեցի՝ իր հօրը հետ, մինչ լոն տարու էր, 1822ին Հնդկաստան կ'ուղևորի և Կալկադայի Մարդասիրական Ընկերութեան վարժարանը տարրական կրթութիւն մը ստանալէ ետև՝ Շուէտի վրայով կ'հասնի Մոսկուա և ուսմանց համար ուղեցած վիսքաքը գոհ ընելու համար կ'մտնէ Լազարեան ճեմարանը։ Ի վերջ՝ այս ճեմարանի հայերէն լեզուի ուսուցիչ և ապա տեսուչ կ'կարգուի և իր գրական անձնական գործունէութիւնը կ'սկսի 1836ին և կ'տևէ մինչև 1881։ Այս քառասունհինգ ամեայ շրջանի մէջ հեղհեղետ չարք մը ռուսերէն, ֆրանսերէն թարգմանութիւններ և հայերէն երկեր ի լոյս կ'հանէ։ Իր պատմական ուսումնասիրութիւնը մեծ հռչակ կ'ձգէ Եւրո-

պա, այնպէս որ զանազան գիտական Ընկերութեանց անդամ կը ընտրուի. իր հայերէն նշանաւոր երկն է «Վէպք Հին Հայաստանի 1850»։ Ուրս լեզուաւ հրատարակած գործերն են երկու անգամ Մովսէս Խորենացիի պատմութիւնն, որու մէջ կէտերը ջնջաց լուսարանել զանազան օտար պատմագիրներու ծանօթութեամբք, Ղ. Փարպեցիին Թուղթն առ Վահան Մամիկոնեան, Վարդան Մեծի և Ասողիկի պատմութիւններն, ինչպէս նաև Շարականներ։ Իսկ Ֆրանսերէն լեզուաւ թարգմանած է Փաւստոս Բիւզանդի պատմութիւնն եա։ Այս բազմարդիւն պատմագէտն առանց ձայնի ու թմբուկի կ'աշխատէր, վասն զի իրրև գիտուն Թեան համեստ բանաւոր կ'փափաքէր անշուշտ որ իր գործերն լինին իր ներքողներն քան թէ շաղակրատ, վարձկան թերթեր։ Իր տեղը գտաւրկ կ'ճնայ հայ մատենագրութեան դաշտին մէջ, և 1886ին երբ կ'տօնուէր Մեսրուպի Էմինի յիսնամեակն Եւրոպայի գիտական աշխարհի ջերմ համակրութեան ցոյցերն իր մեծ արժանեաց և արդիւնաշատ գործունէութեան ապացոյցներն էին։

Փափաքելի է միայն, ինչպէս իրաւամբ կ'առաջարկէ Հանդէս Ամսօրեայ Պատ. Խմբագրութիւնն, որ Մ. Էմինի անունն անմահացնող երկերն հպելի լինէին եւրոպական լեզուներու անհրաժեշտ ժերաշնէից հայերէնի թարգմանուելով, և կ'յաւելունք մեր կէղմէ որ այդ գործն կատարելու ամենայն մասամբ կարողագոյն անձինքը կ'նկատենք նոյն իսկ այդ առաջարկի հեղինակները։

ՄԵԾ. ԳՐԻԳՈՐ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Հայ Ազգը դժալի կորուստ մ'ըրաւ՝ մահուամբ Մեծ. Գրիգոր Կոստանդեանի, այն պատուական հայուն որ ոչ միայն իր ընկերական բարձր դիրքովը այլ և հոգեկան ու մտային ձիրքով քաջածանօթ և համակրելի էր քաղքիս հայ և օտար հասարակութեանց։ Եուսուֆեանց մեծահամբաւ դերդաստանին կապուած, ուսմանց և լուսաւորութեան հետամուտ, յառաջադիմութեան կուսակից, Մեծ. Գրիգոր Կոստանդեան կ'պատկանէր այն սակաւաթիւ հին ժերաշնէից դասակարգին որ տեղւոյս հայ հասա-

բակութեան զարգացման վրայ մեծ ներգործութիւն ունեցած է։ Երկար տարիներ ազգային կրթութեան գործին նիւթապէս և մասնորապէս սատար գտնուած և զանազան պաշտօններու մէջ կարևոր և օգտակար դեր ունեցած է։ Իզմիրի հրդեհէն ետք՝ (1849) իր ազնուական և ուսումնասէր կենակից՝ Մեծա. Շուք Հռիփսիմէ Տիկնոջ յատուկ ծախիւք կառուցուած Հռիփսիմեան վարժարանի հիմնութեան, ինչպէս նաև զանազան ազգօգուտ Ընկերութեանց շնորհած առատ նուէրներուն անմասնը չէր անշուշտ ծերունի նահապետը։ Խարեգութ հայր, բանիբուն ազգասէր, սիրող էր նաև Մեծ. Գրիգոր Կոստանդեան հայ գրականութեան և գիտութեան, և այդ սիրոյն առաջին գրաւականն էր իր անդրանիկ բարեկիրթ որդին, ողբացեալ Սարգիս էֆէնտին, այդ գերազնիւ հոգին, որ, աւաղ, շուրջ տարի ու կէս առաջ, իր տարաժամ մահուամբն այնքան կարեվէր խոցեր էր ծերունի հօրը սիրտն, իսկ միւս կենդանի ընտիր գրաւականներն են երկու գիտնական որդիքն՝ Մեծ. Գալուստ Կոստանդեան, հայ գրականութեան արդէն ծանօթ իր գիտական երկերովը և Տօքտոր Պօղոս Կոստանդեան՝ առաջնակարգ ընտիր բժիշկն։

Արդարև՝ Մեծ. Գրիգոր Կոստանդեան թէ՛ ընտանեկան և թէ՛ ազգային շրջանի մէջ դատարկութիւն թողուց մեզմէ հեռանալով, բայց թողուց նաև ընտիր յիշատակներ որ պիտի փառաւորեն յաւէտ իր պատկառելի անունը։

Մեծ չքով տեղի ունեցաւ Մեծ. Գրիգոր էֆէնտիի յուղարկաւորութեան հանդէսն։ Արժ. Պետրոս Ծ. Վարդապետ Ներկարարեան լաւ դամբանական մ՝ արտասանեց և արժանապէս դրուատեց հանգուցելոյն բարեմասնութիւնները. իսկ Մեծ. Նշան էֆ. Միրզա կարդաց դամբանական ճառ մը զոր ահա կը հրատարակենք ըստ իր խնդրանաց։

«Ազնիւ Տեառք,

«Կոստանդեան բարեհամբաւ Գերդաստանին Նահապետն, հայրենասէր և գիտնական Մեծայարգ Գրիգոր էֆ. Կոստանդեան, խորին ծերացեալ հասակի մէջ կենաց արդիւնաչատ ասպարէզ մի բոլորելով կը հանգչի այսօր ի յաւիտենութիւն ի խոր և յանմխիթար սուգ համակելով իւր ազնուական Ամուսինը, կրթեալ և բանիբուն որդիքը, իւր բազմաթիւ պարագայք,

ծանօթները և վերջապէս Զմիւռնիոյ բոլոր հայ հասարակութիւնը, որոյ յոյժ գնահատելի, պատուաբեր և գիտնական ներկայացուցիչներէ մին էր։

Այս աշնուական անձն իր ամբողջ կեանքըն ուխտած էր ուսման և գրականութեան։ Իր մանկական հասակին մէջ բաղդատորութիւն ունենալով կրթուելու առ ոտս մեծանուն բանաստեղծ Միրզայեան Տէր Յովհան վանանդեցւոյ, որմէ այս ազնուահոգ հանգուցեալն իր երկու համանման դասակից՝ այն է, Մոսկուայի Լազարեանց ճեմարանի հայկաբանութեան և կրօնի դասատու հանգուցեալ բազմարդիւն Մաեր Մագիստրոսի և Աբշըռոոյ բազմաչխատ հիմնադիր–խմբագիր Պալդազարեան Ղուկաս էֆէնտիի հետ ստացան չէ թէ միայն խորին հայերէնագիտութիւն՝ այլ և հայրենասիրութեան, պարտաճանաչութեան և բարեկրթութեան այնպիսի հաստատուն և ընտիր ըսկզբունքներ՝ որք իւրեանց երկարատև կենաց ասպարիզին մէջ ցոյց կուտային թէ կատարելապէս իւրացուցած են իրենց համբաւաւոր դաստիարակին խմաստութիւնը, եռանդուն աղգասիրութիւնը, բարւոյն, աշխիւին և օգտակարին նկատմամբ անկեղծ սէրն ու պաշտումը։ Պատիւ ունեցած եմ տարիներէ ի վեր մտերմական ծանօթութիւն ունենալ այս նշանաւոր անձին հետ, Յամախակի հիացմամբ կը դիտէի իր խորին ծերացեալ հասակի մէջ իսկ ցոյց տուած մտաց կորովը, աղգային բարոյական և մտաւոր յառաջադիմութեան մասին իր իղձերը, իր խորհրդածութիւնները, որք բացայայտ ցոյց կ'ուտային չէթէ միայն իր սրտի ամենակատարեալ աշնուականութիւն, այլ և փորձառական բազմակողմանի հմտութեանց հետ դատողութեան մասին տրամաբանական բացարձակ ճշտութիւն և վեհմտութիւն։ Ինք և իր երկու վերոյիշատակեալ դասակից ընկերք յաւերժացուցած են իւրեանց մեծանուն դաստիարակին համբաւը, ինչպէս որ բազմահմուտ Տէր Յովհան վանանդեցի ալ իր եղական համբաւով և քրտնաթոր աշխատութեամբ պիրենք կենաց երկար ասպարիզի մը մէջ վաստաւորած է յարդարելով պիրենք օգտակար, բանիբուն և կրթեալ անդամներ ազգին։

Հանգուցեալն ունի բազմաթիւ գրական կարևոր աշխատութիւններ, որոցմէ փոքրիկ մաս մը միայն հրատարակուած է, այլ մեծագոյն մասն դեռ լոյս տեսած չէ։ Տարակոյս չունինք որ իր աշնուահոգ և ուսեալ որդիք զանոնք ի դէպ ժամանակի պիտի տան ի հրատարակութիւն և այսպէս պիտի նպաստեն

իրենց պատուական Հօր յիշատակին յաւերժացման նորանոր կոթողներ կանգնելով։

Օրհնեալ և պատուական Ա՛նձ, ի սրտէ սիրած և ճշմարտապէս երախտագիտութեամբ յիշատակած դաստիարակիդ թոռն իրեն երախտագիտական սուրբ պարտականութիւն կը համարի անչնչացեալ մարմնոյդ վրայ այս քանի մը խօսքերն արտասանել։ Արդարև իմ այս խօսքերն կը նկատուին լոկ թերի ստուերագիծ մը քու հոգեկան և մտաւոր գերընտիր բարեմասնութեանց և ծրիցդ։ Իրր ամուսին, իրր հայր և իրր պարտաճանաչ և պատուաբեր անդամ ազգին կենացդ երկարատև ընթացքին մէջ պարտաւորութիւններդ լիուլի կատարեցիր։ Գնա այժմ, հանգչէ՛ ի խաղաղութիւն և երկնաւոր Տիրոջմէ ընդունէ վարձքն քու աշխատանաց, որոց հատուցմունք երկրային չեն կարող լինել։ Եւ մեք խորին կերպիւ կը հաւատանք՝ որ պիտի հաճիս յերկնուստ մխիթարել ազնուական Աչբիդ, զաւակունդ և Ջմիւռնիոյ բոլոր հայ հասարակութիւնը, որոյ այս հրաժեշտով առթած վիշտդ անհուն է և անսահման։ Երթաս բարեաւ։

7 Յունվար 1891
Ջմիւռնիայ

Պ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ

Ա.Ց.Լ ԵՒ Ա.Ց.Լ.Ք

Մանրէ Գարլօ։ — Կարոլոսի լեռն — այսպէս կ'կոչուի սոյն նշանաւոր Քաղքեն ի պատիւ Գարլօ Հռնորիօ իշխանին, որ Մոնագօի՝ իտալական մանր իշխանութեան, երրորդ իշխանն է։ Այս Գարլօ Հռնորիօ իշխանն իր տէրութեան Ցնցած մասը ծախեց 1861ին Ֆրանսացւոց կայսեր վոխարէն մէկ միլիօն Ֆրանք առնելով, և այժմ այդ փոքրիկ վեհապետին միակ ստացուածքին տարածութիւնն է վեց քառակուսի մղոն, 6000 բնակիչներով։ Այս հողին վրայ է Մոնագօ սիրուն քաղաքն որ կ'նայի կապտագոյն Միջերկրականի վրայ իր ժայռուտ սարաւանդէն, քաղաք մ'որ անուանի է իր խաղարանին և զուարճութեանց համար։

Օլիֆէտ։ — Աւելի քան 17000 անգլիական լեզուով օրագիր կ'հրատարակուի, 7500 գերմանական, 6700 Ֆրանսական, 1800 սպանիական ու 1500 իտալական։

Զոֆ. — Իրեւ չափ ձիերու՝ մի ձեռն է չորս բթամատ։

Կանըճեղափ այժ կ'ըսուի այն լոյսն որ կիտի ճարպով վառուած կանթեղէ մը կ'ելնէ ժամը 1200 գարեհատի չափ այրելով։ Մի ձիու զօրութիւնն է այն ոյժն որ 33,000 լիտրէ բեռ կը բառնայ մինչեւ մի ոտն բարձր՝ մի վայրկեան մէջ։

Անգլիոյ եպիսկոպոսական եկեղեցւոյ տարեկան եկամուտն է աւելի քան 6 միլիոն անգլիական ոսկի։

Լինկն օրենք. — Այս անունը ծագումն առած է Ամերիկացի նաւավարի մը՝ Ճոհն Լինչի, անունէն որ սովորէ ր կարճ ու կըտրուկ կերպով դատել իր գաւառին փախստական գերիներն ու չարագործները։ Որովհետեւ իր բնակութեան վայրը հեռի էր դատարաններէ և ինք ուղղադատ և անկողմնակալ մարդ մ'էր, իր դրացիներէն ընտրուած էր որ վճռական դատաստաններ արձակէ յանցապարտներու դէմ։ Այնուհետեւ այդ նաւավարը սկսաւ կոչուիլ Լինչ դատաւոր և իր կարճ վճիռն Լինչի օրենք։

Կապոնեղէն երբեմն ժամացոյց. — Շատեր գիտէին որ կատուները մութին կ'տեսնեն. այս տեսողութիւնն իրենց աչքին յատուկ կազմութեան կ'պարտաւորին։ Անշուշտ տեսած են ամենք որ չափաւոր լոյսի մէջ կատուի բիբն փոքր է և ձուաձեւ, մինչդեռ լիափայլ լոյսի մէջ՝ նեղ։ Իսկ կատարեալ խաւարի մէջ՝ կատուի բիբն բոլորակաձեւ կ'երեւի և բոլոր բոլորակը կ'լեցնէ։ Ձիտա իր կատուի աչքին այս յատկութենէ հետաքրքրաշարժ օգուտ մը կ'քաղէն։ Հիւգ արբան կ'պատմէ թէ երբ Զինաստան կ'ճամբորդեր իր սպասաւորին հարցուց թէ ժամը քանի՞ է։ Մարդը ծանր ծանր կատուի մը մօտ գնաց որ արեւուն կ'տաքնար և անոր աչքը քննելով, ըսաւ արքային որ կէսօր գրեթէ երկու ժամ անցած է։ Երբ հարցուեցաւ սպասաւորին թէ ինչպէս հասկցաւ, նա յայտնեց որ կատուի մը բիբերն առաւօտ շատ լայն են և թէ աստիճանաբար կ'պզտիկնան երբ լոյսը կ'աւելնայ, մինչեւ որ փոքրագոյն կէսը կ'հասնին միջօրէին. ապա նորէն կ'սկսին լայնալ մինչեւ երեկոյ՝ երբ վերստին կ'մեծնան։

— Ցայտնի է թէ այս կենդանի ժամացոյցներն գիշերն ու ամպոտ օրեր չեն բաներ։

Դոռպէրպէյ նոր դարման մը. — Դայմլ օրագրի գրածին նայելով Նանգ քաղքի բժիշկներէն Պէրդէն և Բիգ նոր դարման մ'են գտած դոռպէրպէյ (tubercule) հիւանդութեան դէմ։ Ըստ որում այծի արիւնն ունի այնպիսի նախապահիկ յատկութիւններ որով ջերծ կ'մնան այծերն անգ հիւանդութենէ, վերոյիշեալ մօքտորներն կ'պնդեն որ եթէ այծի արիւնն ներարկուի հիւանդ ծախտաւորներու արեան մէջ պիտի կարենան մաքառիլ այդ հիւանդութեան դէմ։

Այդ փորձն արդէն ըրեր են ի ներկայութեան Բարիզի բժշկական դպրոցին ներարկելով երկու հիւծախտաւորներու ազդրի դնդերային հիւսքի մէջ այծի արիւն, և կ'մնայ տեսնել թէ ինչ արդիւնք պիտի ունենայ այս ներարկութիւնն որ 10 օրն անգամ մը պիտի նորոգուի։

ԼՐԱԲԱՂ

Երեսփոխանական վիճակաց բաշխման համար կազմուած ցանձնաժողովոյ անդամներն են, Վ. Սեմ. Սուխիան փաշա, Վ. Սեմ. Նուբեան էֆ. և Մեծաշատ Ռ. Եղիայեան էֆ. Պերպերեան։

Հաւատարմական հանդրագիր մը ևս մատուցուեցաւ ի կայս. Պալատ, ի ձեռն Լևոն պէյ Փափազեանի և Թրինկր. Սիմոն էֆենտիի։ Սոյն հանդրագիրն՝ որ կ'կրէ 137 ստորագրութիւններ պետական հայ պաշտօնէից, սեղանաւորաց, շիրքեթի խայրիյէի պաշտօնաւորաց և վաճառականաց, առ Օսմանեան գահն կ'կրկնէ հայոց տածած անեզրի հաւատարմութեան և երախտագիտութեան զգացմունքն, որոց շնորհալի պատասխան մը կը տրուի ի պաշտօնէ, և Օգոստափառ Ինքնակալն ի նշան իւր բարձր գոհունակութեան իմիջիայլ պատուանշանի շքեղ րամբ կ'շնորհէ հանդրագիրը մատուցանողներուն։

Կայսերական ներողութեան վրայ գտաւոնեբէ հաւատարմական հանդրագրեր և հեռագրեր կ'հասնին ի Պատրիարքարան և ուղղակի Աբգուսնէքն։

Վեհափառ Սուլթանն Պատրիարքարանի դրամական անձուկ վիճակին ի դարման, այս անգամ ևս շնորհեց 500 ոսկի՝ Իր հանրածանօթ առատաձեռնութեամբը։

Շ.

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Շաբաթական հանդէս

Դաստիարակութեան եւ կրթութեան

Սոյն հանդէսը կ'հրատարակուի ուրբաթ օրերն ընդ Տնօրէնն—խմբագրութեամբ Մեծ. Աբգարեան էֆենտիի և ազգային անուանի գրագէտներու և ուսուցիչներու աշխատակցութեամբ։ Կը պարունակէ Ա) երկրորդական վարժարանաց մէջ աւանդեալ լեզուի, գրական և գիտական դասերու շարք մը երեք կարգերու բաժնուած, այս է՝ տարրական բնոյթ, գլխաւոր բնոյթ, բարձրագոյն բնոյթ. Բ) ծաղկաքաղ յօդուածներ ազգային և օտար լեզուէ. Գ) դասագրական քննադատութիւններ. Դ) կրթական, մանկավարժական, լեզուաբանական, գրական և գիտական յօդուածներ ու տեսութիւններ. Ե) ֆրանսերէն լեզուի վարժութեան համար ընտիր հատուածներ հանգերձ բացատրութեամբք և թարգմանութեամբ։

Տարեկան մուտքն է 50 դահեկան։ Բաժանորդ գրուիլ ուղղը պարտ դիմիլ առ Տնօրէնն — խմբագիրն ի Պէրպերեան տպարան։

ԾԱՂԻԿ ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական եւ Գրական

Ծաղիկը կ'հրատարակուի չորքի օրերը։ Կ'պարունակէ ազգային, քաղաքական, մատենագրական, երգիծական, քննադատական եւ յօդուածներ։ Տարեգինն է Ծաղկի Պօլսոյ համար 45 ղրշ. Գաւառաց համար 50 ղրշ. Օտար երկիրներու համար 12 Ֆրանք. հատը 40 փարա։

Ծաղկի Տնօրէն–Հրատարակիչն է ՅՈՎՆԱՆ ԼՖ. ՓԱԼԱՓՃԵԱՆ, որու պէտք է դիմել սոյն թերթի վերաբերող ամեն գործի համար, Պօլիս, Էսկի Զապտիէ փողոց ՊԷՐՊԷՐԵԱՆ ՆՇԱՆ ԷՖԷՆՏիի Տպարանն, ուր կ'տպուի Ծաղիկն։

Զմիւռնիա բաժանորդ գրուիլ ուզողը կրնայ դիմել ի Մամուրեան տպարան և Ուսում. Ընկերութեան, ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Գ. Ե ՍԻԼՎԱՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ–փաշայի գլուխ թիւ 3

Ոսկի, արծաթ, նիքէլ, ժամացոյց, չղթայ, ապարանջան եւ.

Ով որ մի միայն 7 մէճիտ դրկէ այս վաճառատունն անյապաղ պիտի ստանայ Ոսկի, կոթէն լարուղ, խիստ սիրուն և ընտիր ժամացոյց մը, թէ արանց և թէ կանանց համար, թղթատարի ծախքն վաճառատան կ'վերաբերի։ Ժամացոյցի առևտրով զբաղող վաճառականք ևս կրնան մեծապէս օգտիլ Սէլվաճեան վաճառատան գներէն։

ԳԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Ամեն երեան Մամլոյ տարեկիցն է Զմիւռնիոյ համար $3\frac{1}{2}$ արծաթի մէճիտիէ, իսկ դուրսերու համար՝ 4։

Բաժանորդագրութիւնն տարեկան է, և ցանկալէ կ'սկսի ով որ տարուան ընթացքին մէջ բաժանորդագրուի, արդէն հրատարակեալ ամսագրերը կ'ընդունի։

Աղէ, գաւառաց համար տարեկիցն է $2\frac{1}{2}$ մէճիտիէ։

Խմբագրութեանս վերաբերեալ ամեն նամակ, ձեռագիր պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բաժանորդ գրուիլ ուզողը կրնայ դիմել
ՋՄԻՒՌՆԻԱ առ Խմբագիր-Տնօրէնն.
Կ. ՊՕԼԻՍ ՄԵԾ. Ն. Կ. ՊԷրպէրեան. Լուկ Զապթիէ Ճադեսի, 63.
ՏՐԱՊԻԶՈՆ » Գարուն Մ. Չէվինկիրեան.
ԴԱՎՐԻՃ Աւագ խան Աֆթանտիլեանց.
ՊՕՐՈՒՇԱՆ Ադժ. Տ. Պօղոս Յակոբեան.
ՄԱՐՍԻԼԻԱ ՄԵԾ. Ս. Միրզայեանց. M. S. Mırzayantz. MARSEILLE.
ՄԱՆՉԷՍԹԷՐ Գեր. Ս. Վ. Պարոնեան.
ԿԱՐԻՆ ՄԵԾ. Ա. Մատոյեան.
ԱՐԱԲԿԻՐ ՄԵԾ. Ս. Ամատեան.
ՍԵՐԱՍՏԻԱ ՄԵԾ. Ա. Զամանեան.
ԱՄԱՍԻԱ ՄԵԾ. Յ. Սէչէնեան.